



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 13 - L

05» օգոստոսի 2022

**ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 60-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Նախադպրոցական վաղ մանկության տարիքի առաջին խմբի կրթական համալիր ծրագիրը» N 60-Լ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

8/5/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211



Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի 2022 թվականի
օգոստոսի 5-ի N 13-Լ հրամանի

«Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի 2021 թվականի
դեկտեմբերի 16-ի N 60-Լ հրամանի

**ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐ**

(կյանքի առաջին տարի)

Նախադպրոցական վաղ մանկության տարիքի առաջին խմբի կրթական հիմնական ծրագիրը նպատակ ունի ժամանակի պահանջներին համապատասխան բարելավել սանի խնամքի, առողջության պահպանման և դաստիարակության

գործընթացները՝ սկսած կյանքի առաջին օրերից:

Ծրագիրը նախատեսված է նախադպրոցական ուսումնական հաստատությունների (մսուր, մսուր-մանկապարտեզ, կենտրոն) համար:

Երևան -2021

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս կրթության բնագավառում առաջ քաշվեց կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը, որը պայմանավորված է աշխարհում տեղի ունեցող մի շարք պատճառներով և իրողություններով:

Նման մոտեցման հիմնական նպատակը երեխաներին ապագա կյանքին նախապատրաստելն է, որի արդյունքում տեղի է ունենում կրթական վերջարդյունքների գնահատման վերակողմնորոշում «կրթվածություն», «դաստիարակվածություն», «պատրաստվածություն» հասկացություններից դեպի «կարողունակություն» հասկացությունը:

Պետք է նշել, որ կարողունակությունների զարգացմանը միտված կրթության հայեցակարգային մոտեցումը Նոր չԷ. այն բազմիցս ուսումնասիրվել է բազմաթիվ գիտնականների՝ Վ. Վ. Դավիդովի, Ի. Յա. Լերների, Մ. Ն. Սկատկինի և այլոց կողմից [27]:

Ծրագրի ստեղծումը պայմանավորված է հասարակության մանկավարժական, հոգեբանական, սոցիալական զարգացման բարեփոխումների, ինչպես նաև արդի մանկավարժական գիտության ձեռքբերումներով:

Կարողունակությունների զարգացման վրա հիմնված կրթությունը մանկավարժի ու սաների փոխհարաբերությունների վերակառուցումն է՝ սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ըստ այդմ, նախադպրոցական կրթական բարեփոխումներին ուղղված այս ծրագիրը միտված է իրագործելու հետևյալ արդի հիմնահարցերը՝ ինչպես նպաստել փոքրիկ երեխայի միջավայրում սոցիալականացվելուն և մշակութային արժեքներին ծանոթանալուն: Այստեղ շատ կարևոր է այն հանգամանքը, որ հնարավորինս պահպանվի անձի անհատականության հիմնական առանձնահատկությունները:

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Վաղ մանկության տարիքի առաջին խմբի (0-1 տարեկանների) կրթական ծրագիրը կառուցված է ՀՀ Կառավարության կողմից 13.05.2021թ. N744-Ն որոշմամբ հաստատված Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջների հիման վրա՝ սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ծրագրում ներկայացված են սաների շարժողական, լիարժեք ֆիզիկական զարգացման, տեսողական և լսողական ընկալման ձևավորման, առողջության ամրապնդման, պահպանման, հուզական զարգացման, ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, իմացական գործընթացների ձևավորման և զարգացման, մեծահասակի խոսքն ընկալելու և հասկանալու կարողության ձևավորման, հարազատների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման, սոցիալ-անձնային ձևավորման խնդիրները:

Վերը նշվածով պայմանավորած՝ վաղ մանկության տարիքի առաջին խմբի՝ (0-1 տարեկան) կրթական հիմնական ծրագրի բովանդակությանը ներկայացվում են հետևյալ պահանջները՝

- ✚ համապատասխանությունը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին,
- ✚ կրթության աշխարհիկ բնույթը,
- ✚ երեխաների և մեծահասակների փոխգործունեության երեխայակենտրոն մոտեցման ապահովումը,
- ✚ ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը,
- ✚ համապատասխանությունը տարիքային հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Ծրագիրը սահմանում է տվյալ տարիքային խմբի (0-1 տարեկանների) ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության ընդհանրական կառուցվածքը, կանոնակարգային պահերը, ակնկալվող վերջնարդյունքերը՝ ըստ զարգացման ոլորտների:

Վաղ մանկության տարիքի առաջին խմբի (0-1 տարեկան) սաների կրթության բովանդակությունը ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1. շարժողական ոլորտ,
2. խոսքի և հաղորդակցական ոլորտ,
3. հուզական, սոցիալ-անձնային ոլորտ,
4. իմացական ոլորտ,
5. ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ [3]:

Վաղ մանկության տարիքի առաջին խմբի կրթական ծրագիրը նպատակաուղղված է՝

1. սանի առողջության պահպանմանն ու ամրապնդմանը,
2. սանի հետաքրքրասիրության զարգացմանը,
3. ճանաչողական ունակությունների ձևավորմանը,
4. հաղորդակցական կարողությունների ձևավորմանը և այլն:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերին, օրվա մոտավոր կարգացույցի (ռեժիմ) կազմմանը և դրանց ներկայացվող պահանջներին:

Ծրագրի յուրաքանչյուր բաժնում ներկայացված են դաստիարակության և ուսուցման նպատակն ու խնդիրները, սաների կյանքի կազմակերպման առանձնահատկությունները և տարեվերջին սանից ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ ոլորտների:

Հարկ է նշել, որ սաների զարգացման ընթացքի գնահատումն իրականացվում է մանկավարժների կողմից շարունակական դիտարկման փաստագրման և անհատական թղթապանակների վարման միջոցով:

Այսպիսով, ծրագրի **նպատակն է՝** մշակել վաղ մանկության տարիքի առաջին խմբի (0-1 տարեկան) կրթական հիմնական ծրագրի խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ցուցումներ, ներկայացնել տեսական հետազոտություններ, որոնք կընդգրկեն տվյալ տարիքի սանին բնորոշ կարողունակությունների զարգացումը գնահատող համապատասխան վերլուծություններ՝ առաջնորդվելով 0-1 տարեկանների նախադպրոցական կրթության սկզբունքներով ու չափորոշչային պահանջներով:

Ծրագրի խնդիրներն են՝

- ✓ սաների առողջության պահպանումն ու ամրապնդումը,
- ✓ սաների ֆիզիկական, հուզական, զգայական, իմացական ներդաշնակ զարգացման ապահովումը՝ ըստ ոլորտային վերջնարդյունքների,

- ✓ սաների ինքնասպասարկման տարրական կարողությունների ձևավորումը,
- ✓ սաների խոսքի և հաղորդակցական կարողությունների ձևավորումը,
- ✓ յուրաքանչյուր սանի անհատական կարիքներին միտված ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպումը և սաների զարգացման ընթացքի գնահատումը,
- ✓ սանի խնամքի, զարգացման և դաստիարակության հարցերում ընտանիքի և նախադպրոցական ուսումնական հաստատության միասնական մոտեցումների ապահովումը,
- ✓ օրվա կանոնակարգային պահանջների կատարումը,
- ✓ սաների հետ կատարվող աշխատանքների անհրաժեշտ կյուլթատեխնիկական բազայի ապահովումը:

Ներկայացված ծրագիրը նորարական է այն առումով, որ միտված է՝ պատասխանելու նոր ժամանակների հարցադրումներին, պետության և ընտանիքի դերի նորովի մոտեցումներին և դաստիարակության այնպիսի մոդելներին, որոնք կձևավորեն ժամանակակից աշխարհում իրեն լիարժեք դրսևորող երեխա:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ **Բացատրագիր, Ծրագրի կառուցվածքը, հիմնական նպատակն ու խնդիրները, հայեցակարգային դրույթներ, Սաների առօրյայի կազմակերպումը, Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը՝ ըստ զարգացման ոլորտների. շարժողական ոլորտ (վերջնարդյունքները), խոսք և հաղորդակցական ոլորտ (վերջնարդյունքները), հուզական և սոցիալ-անձնային զարգացման ոլորտ (վերջնարդյունքները), հմացական ոլորտ (վերջնարդյունքները), ինքնասպասարկման, անվտանգության և առողջ ապրելակերպի ոլորտ (վերջնարդյունքները), Վաղ մանկության տարիքի առաջին խմբում կազմակերպվող խաղ- պարապմունքները, Չարգացնող առարկայական միջավայրին ներկայացվող պահանջները:**

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սույն ծրագրով նախատեսվող աշխատանքներն իրականացվում են սեպտեմբերի 1-ից օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում:



**ՍԱՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ընդունված է համարել, որ երեխան ծնվում է հետևյալ հիմնական ֆիզիոլոգիական չափանիշներով՝ միջին քաշը՝ 3.200-3.400 կգ, հասակը՝ 50-52 սմ:

Մարդու ուղեղը կազմված է մոտավորապես 1,4 մլրդ բջիջներից, սակայն նորածնի մոտ դրանք դեռևս չեն գործում: Չարգացման ընթացքում (ծնված օրվանից մինչև 3 տարեկանը) բջիջների միջև ձևավորվում են հատուկ «կամրջակներ», որոնց զարգացմանը զուգընթաց աճում են ուղեղի կարողությունները: Գլխուղեղի բջիջներն ասես ձեռք են մեկնում միմյանց և արձագանքում զգայարանների միջոցով դրսից ստացվող տեղեկատվությանը [13]:

Ստորև ներկայացված են քնի, կերակրման և արթնության պահերի տևողությունները, որոնց հիման վրա ցանկացած նախադպրոցական հաստատություն և ընտանիք կարող են կազմել օրվա կանոնակարգ՝ յուրաքանչյուր տարիքային խմբի կամ երեխայի համար:

**Աղյուսակ 2. Կյանքի առաջին տարում արթնության, կերակրման, քնի
ռեժիմային պահերի քանակը և տևողությունը**

Տարիքը	Կերակրում		Արթնություն		Ցերեկային քուն	
	քանակը	կերակրումների միջև եղած տևողությունը/ժամ/	տևողությունը /ժամ/		քանակը	տևողությունը/ժամ/
1-3ամսական	7	3	1-1,5	4	4	1,5-2
4-6ամսական	6	3,5	1,5-2	3-4	3-4	1,5-2
5-9 ամսական	5	4	2-2,5	3	3	1,5-2
9-12 ամսական	4-5	4-4,5	2,5-3	2	2	2-2,5

Նորածնի առողջ հոգեբանաֆիզիոլոգիական զարգացմանը ներկայացվող պահանջները

0-1 տարեկան երեխայի առողջ հոգեբանաֆիզիոլոգիական զարգացումը լիարժեք իրականացնելու համար համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ պահանջները՝

- ✚ Նորածնի սենյակի և խմբասենյակի ձևավորմանը ներկայացվող պահանջներ,
- ✚ Նորածնի սենյակի ջերմաստիճանային ռեժիմին ներկայացվող պահանջները,
- ✚ Նորածնի սենյակի օդափոխությանը ներկայացվող պահանջներ,
- ✚ Նորածնի խնամքի կազմակերպումը քնի ռեժիմին անցնելիս:

Նորածնի համար նախատեսված սենյակը և նախադպրոցական ուսումնական հաստատության խմբասենյակը ցանկալի է ձևավորել համաձայն հետևյալ պահանջների.

- Սենյակը պետք լինի չոր և լուսավոր, որտեղ դինամիկ հսկողություն պետք է սահմանվի ջերմաստիճանային ճիշտ ռեժիմ ապահովելու համար, քանի որ կյանքի առաջին ամիսների ընթացքում անհրաժեշտ է պահպանել՝ 21-22 C⁰, իսկ 6-րդ ամսից հետո՝ 18-20 C⁰,
- Օրվա մեջ մեկ-երկու անգամ անհրաժեշտ է կատարել խմբասենյակի խոնավ մաքրում և ախտահանում, ինչպես նաև ապահովել 3-4 անգամյա օդափոխության ռեժիմը՝ սաների բացակայության պայմաններում,
- Սանի սենյակը կարգավորելուն զուգընթաց շատ կարևոր է զարգացնող-առարկայական միջավայրի ճիշտ կառուցումը:

Նորածին երեխայի ջերմակառավարումը դեռևս զարգացած չէ, և նա զգայուն է օդի ջերմաստիճանի կտրուկ տատանումների հանդեպ: Այս տարիքի երեխան դեռևս ի վիճակի չէ հաղթահարելու ոչ շոգը, ոչ էլ ցոտի զգացողությունը: Ըստ այդմ, մեծահասակի կողմից սենյակում մշտապես պետք է ապահովել համաչափ ջերմաստիճան՝ 18-21 աստիճան, իսկ վաղաժամ ծնված նորածինների համար՝ 24-25 աստիճան:

Սենյակի ճիշտ ջերմային ռեժիմն ապահովում է երեխայի առողջ քունը և նվազեցնում է հաճախակի հիվանդանալու ռիսկը: Մանկական մահճակալի մոտ կախված ջերմաչափը հնարավորություն կտա մշտապես ապահովելու ճիշտ ջերմաստիճան:

Անհրաժեշտ է պահանջվող խոնավությունն ապահովել սենյակում, քանի որ ջերմացնող սարքերը կարող են չորացնել օդը և անբարենպաստ պայմաններ ստեղծեն շնչառական համակարգի համար: Սակայն պետք է հաշվի առնել սենյակը չափից ավելի չխոնավեցնելու հանգամանքը (60 % ից ոչ բարձր):

Տարվա տաք եղանակին ցանկալի է ցերեկը և նույնիսկ գիշերը նորածնի սենյակի պատուհանները բաց թողնել: Մասնագետների պնդմամբ, անգամ անբարենպաստ եղանակը չի կարող պատճառ հանդիսանալ սենյակի օդափոխությունը չկատարելու համար: Այն պետք է կատարել օրական 3-4 անգամ՝ անկախ եղանակային պայմաններից:

Նորածնի մահճակալը պետք է տեղադրել սենյակի այնպիսի հատվածում, որը հեռու է միջանցիկ քամիներից, արևի ճառագայթներից և էլեկտրական տաքացուցիչներից:

Մահճակալի ներքևակը պետք է պատրաստված լինի բնական հումքից և լինի ոչ շատ փափուկ՝ քրտնարտադրությանից և ողնաշարի հնարավոր թեքումներից խուսափելու համար:

Ցանկալի է, որ անկողնային սպիտակեղենը և երեխայի ներքնահագուստը նույնպես բնական հումքից պատրաստված լինեն, քանի որ այն նպաստում է մարմնի ճիշտ ջերմաստիճանի կարգավորմանը:

Օրվա օրինակելի կանոնակարգ (տարվա ցուրտ և տաք եղանակների) (9 ժամյա, հնգօրյա աշխատանքային շաբաթով)

Օրվա ճիշտ կանոնակարգը և խնամքը, մեծերի կողմից յուրաքանչյուր սանի նկատմամբ ցուցաբերվող հանգիստ և ուշադիր վերաբերմունքը, խոսակցության մեղմ, բարեհամբույր տոնը կարևոր դեր են խաղում մինչև մեկ տարեկան երեխայի դաստիարակության գործում:

Օրվա կանոնակարգը պետք է ապահովի սանի տարիքին և ֆիզիկական վիճակին համապատասխան օրվա քնի և արթնության տևողությունը, դրանց որոշակի հաջորդականությունը:

Կանոնակարգը պետք է կազմվի ամբողջ օրվա համար և իրականացվի ոչ միայն հիմնարկում, այլև՝ տանը: 9-10 ամսական երեխաներին կերակրում են ոչ ուշ, քան արթնանալուց մեկ ժամ անց: Քնի համար սահմանված ժամերին պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք նպաստեն արագ և խոր քնելուն: Արթնության ժամերին անհրաժեշտ է ստեղծել պայմաններ ուրախ խաղերի և շարժումների համար:

Կյանքի առաջին տարում հատկապես անհրաժեշտ է մանրակրկիտ խնամք յուրաքանչյուր սանի նկատմամբ: Սաների օրգանական պահանջների ճիշտ և ժամանակին բավարարումը նրանց ֆիզիկական դաստիարակության կարևորագույն միջոցներից մեկն է:

Կյանքի առաջին ամիսներից սկսած՝ սանն իր արթուն պահերն անցկացնում է մանեժում, իսկ 7-8 ամսականից՝ հատակի արգելափակված մասում: Մեկ մանեժում կարող են գտնվել ոչ ավելի քան 5-6 սաներ, քանի որ արդեն 4-5 ամսականից սկսած՝ նրանք փոփոխում են իրենց դիրքը՝ շրջվում են, առաջ շարժվում:

Խմբում պետք է ստեղծել հանգիստ մթնոլորտ, որպեսզի սաները լսեն մեծերին, իրենց ու մյուս երեխաների ձայնը և արձակած հնչյունները:

Սաների խոսքի և շրջապատում կողմնորոշվելու ունակությունների զարգացման համար պետք է պատից կախել 2-3 նկար, ինչպես նաև սենյակի տարբեր մասերում տեղավորել սյուժետային մի քանի խաղալիքներ: Այդ տարիքի սաներին տրվող խաղալիքները պետք է նպաստեն նրանց զգայական զարգացմանը: Խաղալիքների հետ կատարվող գործողությունները պետք աստիճանաբար բարդացվեն:

Սաների ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ է տալ միայն այն խաղալիքները, որոնք կարող են իրենք օգտագործել:

Ինչպես գիտենք, երեխայի կյանքի առաջին տարին բաժանված է չորս որակապես տարբեր տարիքային շրջանների՝

- ✓ Ծննդյան օրվանից մինչև 2,5–3 ամսական,
- ✓ 2,5-3-ից 5-6 ամսական,
- ✓ 5-6-ից 9-10 ամսական,
- ✓ 9-10-ից մինչև 12 ամսական:

Յուրաքանչյուր տարիքային շրջանի համար առաջարկվում է համապատասխան կանոնակարգի օրինակ, որը կազմված է՝ սաների ֆիզիոլոգիական կարիքների և ֆիզիկական հնարավորությունների հաշվառմամբ: Անհրաժեշտ է պահպանել քնի, կերակրման և արթնության փոփոխության որոշակի հաջորդականություն:

Սանի առօրյան կազմակերպվում է կենսաբանական երկու հիմնական՝ քնի և արթնության վիճակների հերթագայմամբ, որոնց համար պետք է ստեղծվեն անհրաժեշտ պայմաններ:

Ակտիվ արթնության պահպանման համար ծննդյան առաջին ամսից սկսած, անհրաժեշտ է տարաբնույթ խաղալիքների կիրառում, մեծահասակների հետ շփում բազմաբնույթ տպավորությունների համար:

Երեխայի արթուն վիճակին հաջորդում է քնի փուլը: Քնի խախտման դեպքում կարող է առաջանալ հոգնածություն, իսկ երկար ժամանակով արթուն մնալու դեպքում՝ նյարդային վիճակ:

Ուտելու և քնելու պահանջը կարող է կարգավորվել որոշակի հստակ ժամերի, եթե քնի և արթնության վիճակը հստակեցում է:

Սանի կերակրման գործընթացը պետք է կազմակերպել առանց շտապելու և ստիպելու, իսկ 8 ամսականից սկսած՝ հատուկ աթոռակի և սեղանի շուրջ:

Սանին հաջորդ տարիքային փուլ պետք է փոխադրել այն ժամանակ, երբ աստիճանաբար փոխվում է ցերեկային քնի պահանջը. քիչ է քնում, շուտ է արթնանում, անհանգիստ է ուտելիս և ուտելուց առաջ:

Արթնության ընթացքում կազմակերպվում են զվարճանքներ, խաղալարապմունքներ:

Աղյուսակ 2-ում տրված է տարբեր տարիքային փուլերի համար նախատեսված քնի, արթնության և կերակրման մոտավոր կարգը, որի հիման վրա նախադպրոցական հաստատությունները և ընտանիքները կարող են կազմել օրվա կանոնակարգ [59]:

Աղյուսակ 3. Քնի, արթնության և կերակրման մոտավոր կարգ

	0- 2,5ից -3 ամսակա ն	2,5ից ամսականի ց 5-6 ամսական	5-6 ամսակա նից 9-10 ամսակա ն	9-10 ամսականի ց 1 տարեկան
Տանը				
Արթուն վիճակ	6:00–7:00	6:00–7:30	6:00–8:00	6:30–9:00
Կերակրում	6:00	6:00	6:00	
Նախադպրոցական ուսումնական հաստատությունում				
Երեխաներ ի ընդունելու թյուն	8:30–9:00	8:30–9:00	8:30–9:00	8:30–9:00
Առաջին քուն	9:30– 11:30	9:30–11:30	9:30– 11:00	10:00–11:00
Կերակրում	11:30	11:30	11:00	11:00
Արթուն վիճակ	11:30– 12:30	11:30–12:30	11:00– 12:30	11:00–12:30
Չբուսանք	12:00– 12:30	12:00–12:30	12:00– 12:30	12:00–12:30
Երկրորդ քուն	12:40– 13:40	12:30–13:30	12:30– 14:30	12:40–14:10
Կերակրում	13:40	13:30	14:3 0	14:10
Արթուն վիճակ	13:40– 14:40	13:00–14:30	14:30– 16:30	14:10–16:40
Ցերեկային քուն	14:40– 16:40	14:30–16:30	16:30– 17:15	16:40–17:15
Կերակրում	16:40	16:30	17:1 5	17:00

տուն ճանապարհ ում	17:30	17:30	17:30 0	17:30
Տակը				
Արթուն վիճակ	15:00– 16:00	16:30–18:00	18:00– 20:00	18:00–20:00
Քուն	16:00– 18:00	—	—	—
Կերակրում	18:00	—	—	19:00
Արթուն վիճակ	18:00– 19:00	—	—	—
Քուն	19:00– 20:00	18:00–19:30	—	—
Արթուն վիճակ	20:00– 21:00	19:30–21:00	—	—
Լողաց նել	20:45	20:30	19:4 5	19:45
Կերակ րում	21:00	21:00	21:0 0	21:00
Գիշեր ային քուն	21:00–6:00	21:00–6:00	21:00– 6:00	21:00–6:30
Գիշեր ային կերակրում	24:00 (3:00)	23:30 (3:00)	22:0 0 (3:30)	23:00 (մինչև 10 ամսական)

Օրվա կանոնակարգի արդյունավետ կազմման, հետևողական կիրառման արդյունքում սանի առօրյան ավելի կազմակերպված, քունը համեմատաբար խորը և հանգիստ է լինում:

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների ինամքը կազմակերպվում է՝ ըստ անհատական մոտեցման և կանոնակարգի:

Ստորև ներկայացնենք օրվա կանոնակարգի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտ պայմանները.

❖ ապահովել սաների արթնության և քնի կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններ,

- ❖ պահպանել խմբում աշխատող անձնակազմի պարտականությունների հստակ բաշխումը,
- ❖ կարգավորել կերակրման ընթացքը՝ ուղեկցելով այն երկխոսությամբ կամ փոքրիկ զրույցով (օրինակ՝ սպասքից օգտվելու, ճիշտ ուտելու, սննդի և այլնի մասին),
- ❖ յուրաքանչյուր սանի տարիքի, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի հաշվառմամբ՝ ապահովել օրվա ընթացքում անհրաժեշտ քնի, արթնության տևողությունը, կերակրման քանակը,
- ❖ քնի, կերակրման և արթնության միջև սահմանել ճիշտ հերթագայում:



ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈՒՈՐՏ

Անձի տարիքային զարգացման ոչ մի շրջանում ֆիզիկական դաստիարակությունը այնպես ցայտուն չի ներգործում առողջության, ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստվածության, ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման և սոցիալականացման վրա, ինչպես նախադպրոցական տարիքում:

Անկասկած դրանք այն հիմնական բաղադրիչներն են, որոնց վրա հենվելով իրականացվում է սանի բազմակողմանի դաստիարակությունը՝ մտավոր, բարոյական,

գեղագիտական, աշխատանքային, Էկոլոգիական և այլն: Ֆիզիկական դաստիարակության բազմազան միջոցների արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ է կիրառել համակողմանի մոտեցում, կանոնավոր համագործակցել ծնողների հետ:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

- առողջության ամրապնդումն ու պահպանումը, օրգանիզմի կոփումը և դիմադրողականության բարձրացումը, հենաշարժողական ապարատի ամրապնդումը, ճիշտ կեցվածքի ձևավորումը և հարթաթաթության կանխարգելումը, ֆիզիկական ներդաշնակ զարգացումը, օրգանիզմի ֆունկցիոնալ համակարգի բարելավում,
- կենսականորեն անհրաժեշտ շարժողական կարողությունների և հմտությունների /քայք, ցատկ, սողանցում, մագլցում, նետում/ ձևավորում,
- շարժողական ընդունակությունների /արագաշարժության, դիմացկունության, ճարպկության, հավասարակշռության, կոորդինացիայի/ մշակում,
- խաղային գործողությունների ձևավորում,
- շնչառական և մանր մոտորիկայի զարգացման նպատող վարժությունների ուսուցում,
- անշարժ և լոկոմոտորային գործունեության ժամանակին զարգացում (գլուխը պահելու, պառկած շրջվելու, չորեքթաթ կանգնելու, սողալու, նստելու, կանգնելու, քայլելու կարողությունները, կատարելագործել առարկաներով կատարվող գործողությունները):
- սաների շարժողական ակտիվության զարգացման համար պայմաններ ստեղծում,
- ինքնուրույն գործողությունների նկատմամբ դրական հուզական վերաբերմունքի ձևավորում:

0–ից մինչև 1 տարեկան երեխաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն են՝

Ծնված օրից մինչև 2,5—3 ամսական: Կողքի պառկած վիճակում ողնաշարի ռեֆլեկտորային շարժումներ: Մեծի ձեռքերին՝ փորի վրա պառկած, ոտքերը կախ վիճակում, ուղղել ողնաշարը և ոտքերը: Մեծի ձեռքերի վրա ուղղահայաց դիրքով լինելիս պահել գլուխը: Պառկել փորի վրա, այդ դիրքով բարձրացնել, պահել և շրջել գլուխը: Կատարել թաթերի մատների ռեֆլեկտորային շարժումներ՝ ծալել և տարածել ոտնաթաթերի մատները, հեռացնել և մոտեցնել ոտնաթաթերը: Ձեռքերով ձգվել դեպի կախված առարկան, դիպչել դրան: Արձագանքել մեծերի ձայնին (ժպտալ, գըղզըղալ, եռանդով շարժել ձեռքերը, ոտքերը): Փորի եւ մեջքի վրա պառկած դիրքից ոտքերով հրվել հենարանից:

Մերսումը պետք է կատարել օրվա առաջին կեսին ուսելուց մեկ ժամ առաջ կամ

հետո: Մերսման տևողությունը սկզբնական շրջանում պետք է լինի 5-7 րոպե: Օդի ջերմաստիճանը պետք է լինի + 22°C-ից +23°C: Մինչև 1 տարեկան երեխաների մերսումը կատարվում է հետևյալ հնարքները՝ շփում, տրորում, ճմլում, թրթռում: Երեխաներին մերսելու համար պետք է օգտվել մեթոդական գրականության ցուցումներից:

2,5-3 ամսականից մինչև 5-6 ամսական: Պառկել փորի վրա, նախաբազկի վրա հենվելով, իրանը բարձրացնել՝ այդ դիրքով (3 - 4,5 ամսականում), բարձրանալ ուղված ձեռքերի վրա (5-5,5 ամսականում): Մեջքի, վրայից շրջվել կողքի (3 ,5 - 4 ամսական), փորի վրա (5-5,5 ամսական), փորի վրա պառկած վիճակից շրջվել մեջքի վրա (6 ամսական): Սողալ դեպի խաղալիքը, դեպի իրեն կանչող մեծը: Մեջքի վրա պառկած և թևերի տակից բռնած վիճակում ծալել և ուղղել ոտքերը: Մեջքի վրա պառկած ծալել և ուղղել ձեռքերը: Կատարելագործել առարկաներով կատարվող գործողությունները՝ ձեռքերն ուղղել դեպի խաղալիքը , այն բռնել և պահել 2 ձեռքով, մեկ ձեռքով, խաղալիքը թափահարել, գցել, յուրաքանչյուր ձեռքով վերցնել մեկ առարկա և դրանք միաժամանակ պահել: Կատարել որոնողական գործողություններ՝ որպես պատասխան «ո՛ւր է», «որտե՞ղ է» հարցերին:

Ակտիվ շարժումներով արտահայտել հուզական ռեակցիաներ՝ շփման ընթացքում, երգ և երաժշտություն ունկնդրելիս:

5-6 մինչև 9-10 ամսական: Ակտիվորեն սողալ, կանգնել չորեքթաթ: Սողալ և իջնել թեք բլրակից: Նստել երկու կամ մեկ ձեռքի օգնությամբ: Ինքնուրույն՝ նստել՝ պառկած վիճակից և հակառակը: Նստել առանց բռնելու: Օգնել կանգնելու երկու կամ մեկ ձեռքով բռնած: Զայլել թևերի տակից կամ երկու ձեռքերից բռնված: Կանգնել և իջնել ձեռքերով բռնելով հենարանից: Զայլել ՝ բռնելով հենարանից:

Գործողություններ կատարել առարկաներով, գննել, տեղափոխել ձեռքից-ձեռք, թափահարել, գցել, հարվածել: Կատարել է առարկայի հատկությունների հետո կապված գործողություններ, սեղմել ռետինե խաղալիքը, գլորել գնդիկները: Դնել (հանել) և հագցնել մանր խաղալիքները մեծերի մեջ (խորանարդիկները արկղերի մեջ): Կատարել «ծափիկ-ծափիկ». ձեռքերը մեկնել, տալ առարկան, նստել, վերկենալ մեծի ասելով: Պարել երաժշտության տակ:

9-10 ամսականից մինչև 12 ամսական: Կատարելագործել նախկինում յուրացրած շարժումները՝ սողալ, մագլցել և իջնել բլրակից, կքանստել և կանգնել, բարձրանալ ոչ բարձր առարկաների վրա (արկղ) և իջնել դրանցից, անցնել գերանի վրայով, առանց հենվելու, բռնվելու որևէ առարկայից վերկենալ և նստել: Կանգնած դրությամբ թեքվել և ուղղվել առանց ոտքերը շարժելու: Կարողանալ տիրապետել ինքնուրույն քայլքի, մեկ առարկայի վրայից անցնել դեպի մյուսը: Ձեռքերով հենարանից բռնած՝ բարձրանալ և իջնել աստիճանի ու բլրակի վրայով: Զայլել մեծի ցույց տված ուղղությամբ («Եկ ինձ մոտ»,

«Բեր տիկնիկը»): Զայլել գլորանի ետևից:

Կարողանալ ակտիվ գործողություններ կատարել առարկաներով՝ հասնելու որոշակի արդյունքի. մեկ առարկան դասավորել մյուսի մեջ, բացել և փակել արկղի կափարիչը, օղակն անցկացնել ձողի վրա և հանել, մեկ առարկան գցել մյուսի վրա, խորանարդիկը՝ խորանարդիկի վրա և այլն: Խաղալիքներով կատարվող գործողություններում հասնել ինքնուրույնության: Կատարել պարային պարզ շարժումներ՝ ուրախ, առույգ և հանգիստ նվագակցության տակ:

Մինչև 1 տարեկան երեխան կարողանում է սողալ, մագցել ոչ բարձր առարկաների վրա, կքանստել և կանգնել, նստել, կանգնած դրությունից թեքվել և ուղղվել, սկսում է ինքնուրույն քայլել, հենարանից բռնած բարձրանալ, իջնել աստիճանի և բլրակի վրայից: Կարողանում է քայլել մեծի ցույց տված ուղղությամբ, գլորված առարկայի ետևից, կատարվում է պարային պարզ շարժումներ, ուրախ, առույգ և հանգիստ նվագակցությամբ: Դրական է արձագանքում մերսմանը կոփման միջոցառումներին: Վերցնում է մեծի ձեռքից խաղալիքը:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծումը պայմանավորված է սանի օրգանիզմի վրա տարբեր միջոցների միասնական ներգործությամբ:

Եական նշանակություն ունեն նաև ՆՈՒՀ-ում հիգիենիկ բարենպաստ պայմանների ստեղծումը, բավարար չափով բաց օդում լինելը և, ամենակարևորը, սաների նկատմամբ դրսևորվող բարեխիղճ վերաբերումքը, հոգատարությունն ու խնամքը:

Սաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն իրարականացվում են ռեժիմի, սննդի, կուլտուր-հիգիենիկ ունակությունները ու հմտությունների, ինչպես նաև կոփման միջոցառումների փոխկապակցությամբ:

Օրվա ընթացքում դաստիարակը կազմակերպում է խաղեր և երաժշտառիթմիկ վարժություններ, պարային շարժումների տարրեր և այլն:

Կոփում

Նորածինները բաց օդում պետք է լինեն (զբոսանք) 2-3 ժամ: Ցանկալի է որ աստիճանաբար հատկապես տաք եղանակներին երկարացնել երեխաների բաց օդում լինելու ժամանակահատվածը: Սենյակը մշտապես պետք է օդափոխել՝ պահպանելով սենյակի ջերաստիճանը +21 °C:

Ստորև ներկայացնում ենք նախադպրոցական ուսումնական հաստատությունների վաղ մանկության տարիքի առաջին խմբի համար նախատեսված ֆիզկուլտուրայի գույքի ցանկը.

Աղյուսակ 5. Վաղ տարիքի առաջին խմբի համար նախատեսված ֆիզկուլտուրայի գույքի ցանկ

N	Գույքի անվանումը	Քանակ ը
1.	Գերան՝ սողացող խմբի համար	
2.	Բլրակ՝ մանկական (2505 .600 .870 մմ)	1 հատ
3.	Տախտակ՝ կողավոր մակերեսով (1500. 200.68 մմ)	1 հատ
4.	Մովաթե ուղի (200. 35)	2 հատ
5.	Չամբյուղ՝ առարկաների նետման համար	1 հատ
6.	Չամբյուղ՝ գնդակների պահպանման համար	1 հատ
7.	Փչովի գնդակներ (40 սմ տրամագծով)	1 հատ
.8	Ռետինե գնդակներ (6 — 8 սմ տրամագծով)	15 հատ
.9	Ռետինե գնդակներ (20 — 25 սմ տրամագծով)	3 հատ
10	Օղակներ (55 — 65 սմ տրամագծով)	5 հատ
11	Ձեռնասանդուղք	1 հատ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ` ԸՍՏ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ



Ֆիզիկական նպատակաուղղված գործունեությունը նպաստում է օրգանիզմի հենաշարժողական համակարգի ճիշտ ձևավորմանը, հավասարակշռության զարգացմանը, խոշոր և մանր մոտորիկայի զարգացմանը, հիմնական շարժումների ձևավորմանը և այլն:

2 ամսականից 1 տարեկան երեխաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .

- պահպանի և ամրապնդի սաների առողջությունը՝ հիմք ընդունելով օրվա կարգացույցը, որը համապատասխանում է սանի տարիքային և ֆիզիկական առանձնահատկություններին:
- նպաստի յուրաքանչյուր սանի ֆիզիկական և հոգեկան լիարժեք զարգացմանը՝ ձևավորելով հիմնական շարժումները, առարկան բռնելու ֆունկցիայի և առարկաների հետ տարբեր գործողություններ կատարելու կարողություններ, տարածության մեջ կողմնորոշվելու կարողության զարգացմանը:

2-3 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է.

- զարգացնի գլուխն ուղիղ պահելու կարողությունը՝ փորի վրա պառկած, նստած դիրքում,
- հնարավորություն ընձեռի ձեռքերն ու ոտքերն ազատ շարժելու,
- նպաստի մեծահասակի օգնությամբ կանգնելուն,
- նպաստի ձեռքի շարժումների ձևավորմանը՝ ձեռքերն ուղղելով դեպի խաղալիքը կամ մոտեցնելով դեմքին:

3-6 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .

- պայմաններ ստեղծի մեջքից փորի վրա շոջվելու համար,
- ձևավորի առաջ և հետ սողալու, ինքն իր շուրջը պտտվելու կարողություն:
- նպաստի փորի վրա պառկած դիրքում դեպի խաղալիքը ձգվելուն.

6-9 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է՝ ձևավորի տարբեր ուղղություններով սողալու, պառկած դիրքից նստելու, ինքնուրույն նստելու կարողությունը, պայմաններ ստեղծել հետևյալ շարժումների ձևավորման համար՝ կանգնել՝ բռնվելով հենարանից (նստած դիրքից վեր կենալ՝ սկզբում երկու ձեռքով, ապա մի ձեռքով), քայլել՝ բռնվելով հենարանից, վերցնել խաղալիքը տարբեր դիրքերից, զարգացնել ձեռքերի, մատների ակտիվ շարժումները, կրկնել մեծահասակի կողմից կատարվող շարժումները՝ բարձրացնել, իջեցնել ձեռքերը, սեղմել և բացել բռունցքները և այլն:

9-12 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է՝ սովորեցնի կատարել հետևյալ շարժումները՝ ոտքերով բարձրանալ բարձի վրա, սահել,

բարձրանալ բազմոցին, աթոռին, իջնել հատակին, թեքվել, կանգնել միայնակ, քայլել մեկ կամ երկու ձեռքով բռնելով մեծահասակի ձեռքը, առանց աջակցության ինքնուրույն մի քանի քայլ կատարել, ընդօրինակել մեծահասակների ծանոթ շարժումները, հասակակիցների պարզ շարժումները, նպաստել ձեռքերի համակարգված գործողությունների ձևավորմանը, սովորեցնել առարկաները տեղավորել տուփի մեջ:

ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԿՆԿԱԼԿՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ



ա. Սանն ինքնուրույն կամ մեծի օգնությամբ կարողանում է սողալ, սողալով մագլցել ոչ բարձր առարկաների վրա և իջնել, կքանստել ու կանգնել,

- փորիկի վրա պառկած՝ հենվում է թաթիկների վրա, մարմինը մի քիչ բարձրացնելով, կարողանում է այլ դիրք ընդունել,
- մեծահասակի օգնությամբ ամուր հենվում է ոտքերի վրա,
- սողում է ձեռքերի և ծնկների օգնությամբ,
- մի քանի վայրկյանով կանգնում, երբ նրան կանգնեցնում են պինդ մակերևույթի վրա, այնուհետև կանգնում է ինքնուրույն և անում քայլերու փորձեր,
- քայլելում է երկու ձեռքերից բռնած, «ճանապարհորդում է» կահույքի շուրջ բոլորը:
- ինքնուրույն կանգնում է, առանց կողմնակի օգնության մի քիչ քայլում սենյակում, կքանստում:

բ. կարողանում է նստել առանց հենվելու և բռնվելու որևէ առարկայից,

- պառկած տեղից ինքնուրույն, առանց հենվելու նստում է
- նստած դիրքում ազատ շարժումներ է անում,
- նստած խաղում որևէ առարկայով:

գ. կարողանում է կանգնած դրությունից թեքվել և ուղղվել առանց ոտքերը շարժելու,

- կանգնած դիրքում թեքում է մարմինը ձայնի կամ իրեն հետաքրքրող առարկայի ուղղությամբ,

դ. սկսում է ինքնուրույն քայլել, ոչ բարձր առարկայի վրայից անցնել դեպի մյուսը,

- անում է ինքնուրույն քայլերու փորձեր,
- քայլելիս փորձում է հաղթահարել «ճանապարհին հանդիպած խոչընդոտները»,

ե. Կարողանում է ձեռքերով հենարանից բռնած բարձրանալ և իջնել աստիճանի և բլրակի վրայից,

- մեծահասակի օգնությամբ կամ բռնվելով կարողանում է բարձրանալ և իջնել աստիճաններ, բլրակ,

զ. կարողանում է քայլել մեծահասակի ցույց տված ուղղությամբ, քայլել գլորած առարկայի հետևից,

- քայլում է հետաքրքրող առարկայի հետևից,
- քայլելիս հետևում է մեծահասակի ցույց տված ուղղությանը,
- քայլում է գլորվող գնդակի ետևից:

է. Կարողանում է ակտիվ գործողություններ կատարել առարկաներով որոշակի արդյունքի համար՝ մեկ առարկան դասավորել մյուսի մեջ, բացել և փակել արկղի կափարիչը, օղակն անցկացնել ձողի վրա և հանել, նետել առարկաներ,

- առարկաները դնում է իրար վրա, իրար մեջ,
- բացում, փակում է դարակը, փականները, այլ
- ձողի վրա անցկացնում է օղակ կամ այլ առարկա /փորձելով հարմարեցնել ձողին,

- նետում է առարկաները.

ը. կատարում է պարային պարզ շարժումներ ուրախ, առույգ և հանգիստ նվազակցությամբ,


- ցուցաբերում է հետաքրքրություն պարային շարժումների նկատմամբ,
- երաժշտության ներքո ոտքերով և ձեռքերով կատարում է ռիթմիկ շարժումներ:

թ. դրական է արձագանքում մերսմանը, կոփման միջոցառումներին,

- իրեն ծանոթ կոփման միջոցառումներին /լրգանք, մերսում, զբոսանք, ջրշփում/ դրական է արձագանքում:

ժ.վերցնում է մեծի ձեռքից կամ գլխավերևում կախված խաղալիքը, կատարում տարբեր շարժումներ.

- ձգվում և բռնում է իրեն դուր եկած առարկան կամ խաղալիքը,
- թափահարում է վերցրած խաղալիքը, տեղափոխում մի ձեռքից մյուսը,
- կարողանում է միաժամանակ ձեռքերում պահել տարբեր առարկաներ:



ԽՈՍՔ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Երեխան նախախոսքային շրջանում ընկալում է առարկայի արտաքին հատկանիշները (առարկայի գույն, մեծություն, ձև), այսինքն՝ նրա մոտ գերակշռում է ընկալումների զգայական կողմը: Հարկ է նախապես ընտրել ուսուցանվող բառերը, քանի որ նպատակահարմար չէ միևնույն բառերը երկար ժամանակ կրկնել երեխայի համար. Պետք է աստիճանաբար դրանք համալրել նոր բառերով, ինչպես նաև կրկնել նախկինում սովորածը:

Խոսքի զարգացման համատեքստում էականորեն փոխվում է սանի գործունեության բնույթը. երեխաները սկսում են խաղալ տեսողական, լսողական կամ այլ ազդակների ներգործությամբ: Օրինակ՝ տեսնելով ավտոմեքենան՝ սանն այն համադրում է իր նախկին փորձի հետ՝ կատարելով տարաբնույթ շարժումներ:

Վաղ մանկության տարիքում երեխաների խոսքի զարգացման գործընթացը բավականին արագ է, քանի որ այն պայմանավորված է դաստիարակության ակտիվ ներգործությամբ և մեծահասակների անմիջական մասնակցությամբ: Մանկահասակ երեխայի խոսքի ճիշտ հնչարտաբերումը պայմանավորված է խոսքային լսողության զարգացման, խոսքաշարժողական կենտրոնի և ողջ համակարգի ֆունկցիոնալ արդյունավետ գործունեությամբ:

Եթե երեխան բառն ընկալում է խոսքային լսողությամբ, ապա խոսքաշարժողական ապարատի և շնչառության օրգանների համատեղ գործունեությամբ ստացվում է պատասխան խոսքը:

Երեխան կյանքի առաջին ամիսներին կատարում է արտաբերական որոշակի շարժումներ և պարզ շարժումներից աստիճանաբար անցնում է բարդերին՝ միացնելով հնչյունները, որոնք հետագայում վերածվում են բառերի:

Կյանքի առաջին տարում հնչարտաբերման ուսուցումն իրականանում է հնչյունը երեխայի լսողության միջոցով ճիշտ հասցնելու միջոցով:

Մեծահասակը հնչյունն արտաբերում է հստակ, պարզ և երեխայի ուշադրությունը կենտրոնացնում է ուղղակի հնչյունի վրա:

Չնչարտաբերման մաքրությունը մեծամասամբ պայմանավորված է բառի կառուցվածքով:

Փաստենք, որ երեխայի խոսքը ձևավորվում և զարգանում է մեծահասակների հետ հաղորդակցման ընթացքում: Ուստի, դաստիարակը պետք է հաճախակի շփվի երեխայի հետ, նրա մեջ դաստիարակի մարդկանց դիմելու նախաձեռնողականության կարողություն, արձագանքի երեխայի արտաբերած խոսքի հնչերանգներին:

Մեծահասակից պահանջվում է երեխայի հետ խոսել դանդաղ, հանգիստ, սիրալիր և անընդհատ կրկնել բառերը, չօգտագործել մանկական կամ աղավաղված բառաձևեր:

Խոսքի արտաբերման ժամանակ կարող են նկատվել նաև խոսքի զարգացման հապաղումներ, որոնք արտացոլվում են հետևյալ կերպ.

- 4 ամսականում երեխան ժպիտով չի արձագանքում հարազատներին,
- 6 ամսականում երեխայի մոտ բացակայում է գղզանքը,
- 1 տարեկանում «մամա, պապա, տուր» չի ասում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՈՒՈՐՏԻ



Խոսքի զարգացումը նախադպրոցական տարիքում ներառում է խոսքի՝ որպես հաղորդակցության միջոցի տիրապետումը, ակտիվ բառապաշարի հարստացումը, կապակցված, քերականորեն ճիշտ երկխոսության և մենախոսության զարգացումը, ստեղծագործական խոսքի զարգացումը, խոսքի առոգանության զարգացումը, հնչյունային լսողության զարգացումը, ծանոթացումը գրքին, գեղարվեստական ստեղծագործություններին, մանկական գրականության տարբեր ժանրերին:

➤ **2 ամսականից 1 տարեկան սասների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .**

➤ նպաստի յուրաքանչյուր սանի լիարժեք զարգացմանը՝ պայմաններ ստեղծելով մեծահասակների հետ շփման համար,

➤ Նպաստի սանի մոտ ձայնային ռեակցիաների ձևավորմանը (ձայնային, վանկային և նախախոսքային ակտիվություն) և չտարբերակված ձայնային գործունեության զարգացմանը (գդգդանք, առաջին բառեր և այլն):

➤ **2-3 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .**

➤ ձևավորի մեծահասակի ձայնը լսելու ցանկություն,

➤ խթանի սկզբնական հնչյունների արտաբերումը, ինչպես նաև ձայնավոր և բաղաձայն հնչյունների արտասանությունը,

➤ նպաստի հնչյունների հարստացմանը

➤ **3-6 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .**

➤ ձևավորի հնչյունների ճիշտ արտաբերում,

➤ նպաստի մեծահասակների ձայնի հնչերանգի ընդօրինակմանը,

➤ ձևավորի մեծահասակների շրթունքների շարժումներին հետևելու կարողություն,

➤ սովորեցնի արձագանքել իր անվանը:

➤ **6-9 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է.**

➤ զարգացնի բանավոր խոսքի ընկալումը՝ (իր անունը լսելիս երեխան շրջվի դեպի խոսողը,)

➤ սովորեցնի պատասխանել «Որտե՞ղ է» հարցին՝ հայացքն ուղղելով դեպի տվյալ մեծահասակը կամ առարկան, ընկալի պարզ հրահանգները՝ «տուր», «վերցրու»,

➤ սովորեցնի վերցնել և մեծահասակին փոխանցել այն առարկան,

➤ սովորեցնի հասկանալ առանձին առարկաների նշանակությունը՝ բաժակներ, գդալներ, շշեր, սանր և այլ,

➤ զարգացնի հնչյունների վերարտադրման կարողությունը,

➤ սովորեցնի կրկնել մեծահասակի արտաբերած հնչյուններն ու վանկերը;

➤ **9-12 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է.**

➤ զարգացնի խոսքի ըմբռնումը,

➤ նպաստի լսելու և կենտրոնանալու ունակության ձևավորմանը,

➤ սովորեցնի մեծահասակի հետ միասին մի քանի բառերով խաղալիքներ, առարկաներ կամ նկարներ,

➤ առաջացնի մեծահասակների անուններին արձագանքելու ցանկություն /շրջվել նրա կողմը, ում անունը լսել է/

➤ առաջացնի ծանոթ առարկաներ գտնելու ցանկություն, մեծահասակի խնդրանքով գտնի երկու խաղալիքներից մեկը, ցույց տա մարմնի, դեմքի մասերը,

➤ նպաստի ժեստերին արձագանքելու և պարզ հրահանգներին հետևելու ունակության ձևավորմանը,

- նպաստի «կարելի է» խոսքը հասկանալուն,
- սովորեցնի թափահարել ձեռքը «Ցտեսություն» ասելիս,
- ձեռքերով ցույց տա, թե ինչպես են թռչում և ցույց տա «Ոչ» բառը,
- զարգացնի ակտիվ խոսքը՝ սովորեցնելով արտաբերել առանձին վանկեր, հնչյունակապակցություններ /մա-մա, պա-պա, բա-բա, բի-բի, կո-կո/,
- սովորեցնի ընդօրինակել ծանոթ ձայներն ու շարժումները՝ «երգել», բղավել, ընդօրինակել կենդանիներին,
- սովորեցնի արտաբերել պարզ բառեր:
- առաջացնի մեծահասակի՝ «Ո՞վ է սա», «Ի՞նչ է սա» հարցերին պատասխանելու կարողություն և ցանկություն:

ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՁՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ



- ա. սանը կատարում է մեծերի հետ հաղորդակցվելու փորձեր,
- տարբեր ձայների և ձայնարկությունների միջոցով արտահայտում է հույզերը/ուրախություն, բողոք, հաճույք, այլ/
 - ընկալում և կատարում է պարզագույն գրահանգներ /արի՝ ձգվում է կանչողի կողմը, ծափիկ՝ թաթիկները զարկում է իրար, տաշիկ՝ վեր է բարձրացնում, այլ/
- բ. արձագանքում է իրեն ուղղված խոսքին համապատասխան վարքային դրսևորումներով,
- շրջվում է ձայնի կողմը,
 - թափահարում է ձեռքերն ու ոտքերը,
 - արձագանքում է խոսակցին /կարծես փորձում է պատասխանել/,
 - արձագանքում է անվանը,
 - փորձում է կրկնօրինակել պարզ վանկերը /բերանի ապարատը հարմարեցնելով/
- գ. արտաբերում է միավանկ և նույն վանկից կազմված բառեր./
- կրկնում է պարզ վանկերը /մա-մա, բա-բա, տա-տա, այլ.



ՀՈՒՉԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԱՆՁՆԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ

Յուրաքանչյուր երեխա կարիք ունի հուզական, սոցիալ-անձնային, հոգեբանական լիարժեք զարգացման:

Որոշ տեսությունների համաձայն՝ մանկահասակ երեխաների սոցիալ-անձնային ձևավորման գործընթացը շատ ավելի վաղ է սկսվում: Պետք է փաստել, որ տվյալ տարիքում դրսևորված հոգեբանական փոփոխությունները հանդես չեն գալիս ավարտուն վիճակում, քանի որ վերջիններիս արտաքին դրսևորմանը սովորաբար հաջորդում է զարգացման լատենտ կամ թաքնված շրջանը: Հավելենք նաև, որ որոշակի անձնային որակների արտահայտման համար անհրաժեշտ են ինքնադրսևորման համապատասխան պայմաններ:

Երեխայի անհատականության ձևավորման և զարգացման գործընթացը սկսվում է կյանքի առաջին տարում, սակայն տեսանելի է լինում զարգացման ավելի ուշ շրջանում:

Վաղ մանկության տարիքում կարևոր դեր են խաղում հույզերը: Դրա համար երեխային ներկայացվող պահանջները պետք է դարձնել գրավիչ:

Սանի վարքում կարող են դրսևորվել մի շարք դրական հույզեր. ուրախություն, հետաքրքրասիրություն, սեր և կապվածություն, ինչպես նաև բացասական հույզեր՝ վախ, զայրույթ, վիրավորանք, խանդ, շփոթմունք և այլն: Հոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրական հույզերը բարձրացնում են օրգանիզմի կենսունակությունը, ակտիվացնում հոգեկան գործընթացները, իսկ բացասականները՝ ընկճում երեխային:

Դաստիարակը կամ ծնողը պետք է հարստացնի սանի հուզական կյանքը՝ ձգտելով նրանց մեջ առաջացնել դրական հույզեր, հնարավորինս կանխել բացասական հույզերի առաջացումը:

Երեխայի սոցիալական և հուզական զարգացումը ենթադրում է.

- մեծահասակների և հասակակիցների հետ շփման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,
- աստիճանական ինքնուրույնության ձեռքբերում:

Նորածնի առաջին սոցիալական դրսևորումները կապված են ֆիզիոլոգիական կարիքների արտահայտման հետ (սնունդ, ըմպելիք ջերմային հարմարավետություն, շարժում, ցավի բացակայություն, մարմնի հարմարավետ դիրք):

Մեծահասակի հետ հուզական հաղորդակցության արդյունքում երեխայի մոտ առաջանում է շփման կարիք, ֆիզիոլոգիական, հուզական ռեակցիաներն

աստիճանաբար վերածվում են սոցիալապես կարևոր ռեակցիաների (օրինակ՝ նորածին երեխան հանգստանում է, երբ նրան գրկում են):

Առաջին ամսվա վերջում երեխան կարող է հայացքը կենտրոնացնել որևէ բան դիտելիս:

Երկրորդ ամսվա վերջում երեխան կարողանում է հետևել որևէ շարժվող դեմքի, ժպտում է մեծահասակի քնքուշ ձայնի ի պատասխան:

Կյանքի երրորդ ամսում երեխան արտաքին տարբեր հաճելի ազդեցությունների նկատմամբ ավելի շատ է ունենում դրական հուզական ռեակցիաներ, որոնք զուգակցվում են երեխայի շարժողականությամբ, ուղեկցվում ժպիտով: Այս տարիքում ցանկացած մարդ կարող է ժպիտ առաջացնել նորածնի մոտ:

4-րդ և 5-րդ ամիսների վերջում ձևավորվում են պատկերացումներ հաճախակի կրկնվող իրավիճակների, փոխհարաբերությունների վերաբերյալ և աստիճանաբար զարգանում են երեխայի ճանաչողական հույզեր:

6 ամսականում երեխաները տարբեր կերպ են արձագանքում ծանոթներին և անծանոթներին: Երեխան կարողանում է ընկալել արտաքինի և դեմքի արտահայտությունների, ձայնի անհատական տարբերությունները: Այս տարիքում կարելի է առանձնացնել մի խումբ հիմնական հույզեր՝ ուրախություն, տխրություն, տարբեր արձագանքներ ծանոթների ու անծանոթների հանդեպ, դժգոհություն:

6- 12 ամսականում սոցիալական հույզերը երեխայի տարբեր գործողությունների յուրացման արդյունքում դառնում են ավելի բազմաբնույթ, փոխվում է նաև մեծերի հետ շփման բովանդակությունը, և երեխան ավելի է կենտրոնում տարբեր առարկաների հետ համատեղ գործողությունների կատարման վրա:

Սանն աստիճանաբար մտնում է նպատակային «սոցիալական խաղի» մեջ, որտեղ դրսևորում է նախաձեռնողականություն, բանավոր հաղորդակցման ձգտում և հուզական արձագանք /ուրախություն, զարմանք, տխրություն, անհանգստություն/:

Սանի ներդաշնակ զարգացումը չի սահմանափակվում առարկայական գործունեության զարգացմամբ, խոսքի յուրացումով, խաղային գործունեությամբ: Այս ամենը կարող է հիմք հանդիսանալ մանկահասակ երեխայի՝ հետագայում «արվեստի» աշխարհի մուտք գործելու համար:

Սաների դաստիարակության գործընթացում կարևոր տեղ է զբաղեցնում գեղագիտական դաստիարակությունը:

Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է նախադպրոցական սաների հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության, բացահայտում սանի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ:

Երաժշտությունն առանձնահատուկ տեղ է գրավում նախադպրոցական տարիքի սաների դաստիարակության գործում: Այն սաների հոգու հայելին է, նրանց հույզերի, զգացմունքների արձագանքը: Իսկ զգացմունքը երաժշտության հիմնական բովանդակությունն է, սաների հուզական ոլորտը ձևավորելու արդյունավետ միջոցներից մեկը:

Երաժշտական դաստիարակության նպատակն է ձևավորել երաժշտության աղբյուրին զգացմունքայնորեն արձագանքելու և սաների ուշադրությունը կենտրոնացնելու կարողությունը:

Խնդիրները՝

- զարգացնել սաների երաժշտական ունակությունները,
- նպաստել երաժշտության ընկալման զարգացմանը,
- մշակել լսողական ուշադրություն,
- առաջացնել զգացմունքային արձագանք մեծահասակների երգի, երաժշտական խաղալիքների, գործիքային երաժշտության հանդեպ (սաները երգում են առանձին վանկերով),
- հետաքրքրություն ձևավորել մեծահասակների պարային շարժումների նկատմամբ, ինչպես նաև խթանել ակտիվության դրսևորումը (սաները ծափահարում են, պարում, թափահարում չիսչիկանը, ժապավենը, գլորում են գնդակը),
- ծննդից մինչև 2,5-3 ամսականում ձևավորել լսողական կենտրոնացում, օգնել գտնել ձայնի աղբյուրը (զանգեր, աղմուկ, մեծահասակի երգ),
- նպաստել ձայնը լսելու, դրական և զգացմունքային արձագանքելու ունակության ձևավորմանը (ժպիտ, բզզոց և այլն):
- 2,5-3-ից 5-6 ամսականում զարգացնել երաժշտական ընկալումը,
- ձևավորել մեծահասակների հետ երգելու և երաժշտական գործիքների ձայնի վրա կենտրոնանալու հմտություն,
- զգացմունքային արձագանք առաջացնել ուրախ և հանգիստ մեղեդիներ լսելիս,
- խրախուսել երգերին մասնակցելը, ձեռքերով և ոտքերով շարժումներ կատարելը, որոշակի ձայներ արտաբերելը,
- ձևավորել մեծահասակի օգնությամբ ձեռքերը բարձրացնելու, իջեցնելու ունակությունը (ինքնուրույն հարված թմբուկին, զանգի թափահարում),
- 5–6 ամսականից մինչև 9–10 ամսականը զարգացնել վոկալ և գործիքային երաժշտություն լսելու ցանկությունը,
- նպաստել սաների հուզական արձագանքմանը՝ ուրախ, արագ, տխուր, հանգիստ, դանդաղ մեղեդիներ լսելիս, որոնք հնչում են տարբեր երաժշտական գործիքներով՝ մեծահասակի կատարմամբ,
- խթանել հնչյունների և վանկերի արտաբերումը,
- նպաստել պարային մեղեդիների ընկալման մեջ ակտիվության դրսևորմանը,
- զարգացնել մեծահասակների օգնությամբ հետևյալ շարժումները կատարելու կարողությունը՝ ծափահարել, կծկվել, ծալել ծնկները,

- 9-12 ամսական սաների մոտ խթանել հաճույքի զգացում վոկալ և գործիքային երաժշտության նկատմամբ,
- զգացմունքային արձագանք ձևավորել հակադիր բնույթի երաժշտությանը (ուրախ - հանգիստ, արագ - դանդաղ),
- հետաքրքրություն առաջացնել նվագարանների ձայների հանդեպ,
- խրախուսել սաներին թափահարել ձեռքերը, ձեռքերի ոտքերով հարվածել, պարել, երաժշտական խաղալիքներով խաղալ:

Այս տարիքային խմբում իրականացվում են երաժշտական գործունեության հետևյալ տեսակները՝

- ❖ ունկնդրում,
- ❖ երգեցողություն,
- ❖ երաժշտաշարժական վարժություններ,
- ❖ պար, խաղ,
- ❖ նվագ մանկական, բնական նվագարաններով,
- ❖ մատների մարզանք,
- ❖ ռիթմիկ զգացողության զարգացում,
- ❖ երաժշտական թերապիա:

Չոգեբանները գտնում են, որ լսողության զգայունությունը վաղ տարիքում է հայտնվում երեխաների մոտ: 10-12 օրական փոքրիկը արձագանքում է ձայներին շարժումներով: Երկրորդ ամսվա ընթացքում երեխան դադարում է շարժվել և ինքնուրույն գտնելով ձայնի աղբյուրը, ուշադիր լսում է երաժշտությունը: 4-5 ամսականում երեխան թեքվում է այն կողմը, որտեղից լսվում է երաժշտությունը, սկսում է արձագանքել՝ ելնելով երաժշտության բնույթից ուրախանում կամ հանգստանում է: Չետևաբար հուզական արձագանքը զարգանում է ունկնդրման ժամանակ: Այնուհետև զարգանում է երեխաների երաժշտականության զգայական՝ սենսորային հիմքը: Երեխան սկսում է արձագանքել հնչյունների արտահայտչական միջոցներին (տեմբո, ուժգնություն, բարձրություն): Սկսում են զարգանալ երաժշտական մտածողության և հիշողության հիմքերը: Տարվա վերջում երեխաները ճանաչում են ծանոթ ստեղծագործությունները: Լսում են երգը՝ դեռևս չհասկանալով բովանդակությունը: Նրանց մոտ զարգանում է երաժշտության ընկալումը՝ ինչպես վոկալ, այնպես էլ գործիքային երաժշտության միջոցով: Չուզականորեն են արձագանքում երաժշտության տրամադրությանը, բնույթին, ձայնակցում են գեղզեղալով: Երաժշտության ներքո՝ նմանակելով մեծերին, երեխաների մոտ ի հայտ են գալիս նոր շարժումներ: Նրանք կատարում են տարբեր պարզագույն շարժումներ՝ զանազան պարագաներով: Այս տարիքում երեխաները երաժշտության ուղեկցությամբ սիրում են խաղալ սյուժետային խաղեր, որտեղ երաժշտական խաղալիքը մեծ դեր է կատարում:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

- «Ծափիկ-ծափիկ» Ժողովրդական
- «Դոփ-դոփիկ» խոսք՝ Վազգեն Տայանի, երաժշտ.՝ Ա. Օհանյանի
- «Զան ծաղիկ» Ժողովրդական

- «Էծիկ» խոսք՝ Հակոբ Աղաբաբի, երաժշտ.՝ Ժողովրդական
- «Շնիկ» խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի
- «Ծիտիկ» խոսք և երաժշտությունը՝ Ս. Վարդանյանի
- «Փաթիլ» խոսք և երաժշտությունը՝ Անահիտ Մովսիսյանի
- «Իմ գնդակը» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի
- «Արև-արև» ժողովրդական
- «Բարի գիշեր» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Ուրախ պար» երաժշտ.՝ Ա. Մանուկյանի
- «Գնացք» երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի
- «Ծիտիկ» խոսք՝ Ղազարոս Աղայանի, երաժշտ.՝ Հռիփսիմե Խրիմյանի
- «Լուսին» խոսք՝ Խնկո Ապր, երաժշտ.՝ Հռիփսիմե Խրիմյանի
- «Փիսիկ» խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի
- «Փիսիկ» խոսք՝ Խնկո Ապր, երաժշտ.՝ Հռիփսիմե Խրիմյանի
- «Աքլորը» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՀՈՒՉԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԱՆՁՆԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԻ



Հուզական զարգացումը գեղագիտական վերաբերմունքը շրջապատող աշխարհի նկատմամբ, երաժշտության, գեղարվեստական գրականության ընկալումը, կերպարներին կարեկցելու կարողությունը:

Այս տարիքում առանձնացված է դաստիարակի նպատակաուղղված գործունեության հիմնական բովանդակությունը.

1. նպաստել և զարգացնել մեծահասակների և ընդհանուր շրջապատի հետ հուզական շփման և սոցիալական հիմնական հմտությունները, ընդլայնել հուզական շփման տիրույթը, ինչպես նաև երեխային ներգրավել տարաբնույթ՝ իր տարիքին բնորոշ գործունեության ձևերի մեջ,
2. ձևավորել և զարգացնել հուզական արձագանքի նախադրյալներ մեծահասակների և հասակակիցների հետ շփումներում, որի համար նախ անհրաժեշտ է՝ սեփական վերաբերմունքն արտահայտել ժպտալով, խոսել բարեհամբույր ձայնով, փորձել հիմնականում առաջացնել դրական հուզական արձագանք: Դրա համար, երբ արդեն

ձևավորվում է «աշխուժացման բարդույթը», անհրաժեշտ է այն ամրապնդել՝ երեխային մշտապես լավ վերաբերմունք ցուցաբերելով՝ շոյել, գրկել,

3. զարգացնել հուզական արձագանքի և խոսքի համադրումը սանի հետ մշտական շփման ընթացքում, որպեսզի հնարավորություն ընձեռվի մոտ ապագայում պարզ, հստակ խոսքեր ընկալելու և արտաբերելու համար

4. ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն սանի գեղագիտական ընկալունակության զարգացմանը (երգ-երաժշտության, ոտանավոր):

2 ամսականից 1 տարեկան սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .

- նպաստի յուրաքանչյուր սանի լիարժեք ֆիզիկական և մտավոր զարգացմանը,
- նպաստի սանի զգայական ունակությունների զարգացմանը
- հարստացնի շրջապատում գտնվող առարկաների հետ գործողություն կատարելու փորձերը,
- նպաստի ի պատասխան մեծահասակի հուզական խոսքի տրվող հակազդումների կարողության ձևավորմանը՝ հեքիաթներ պատմելիս, երգեր երգելիս, խաղալիքների հետ գործողություններ կատարելիս:

2-3 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .

- Կազմակերպի խաղեր՝ օգտագործելով ձայնային խաղալիքներ,
- երգի և զրուցի սանի հետ,
- նպաստի սանի արձագանքներին,
- սովորեցնի հայացքով փնտրել ձայնի աղբյուրը,
- ստեղծի պայմաններ, որպեսզի սանը կարողանա փնտրել զանգակի ձայնը:

3-6 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .

- սովորեցնի հետևել շարժվող վառ առարկաներին,
- սովորեցնի տարբերել հիմնական գույների առարկաները՝ կարմիր, կապույտ, դեղին,
- սովորեցնի տարբերել տարբեր ձևերի առարկաները:

6-9 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .

- ձևավորի ձեռքում գտնվող առարկան դիտելու կարողություն,
- ձևավորի հայացքով հեռացող առարկային հետևելու կարողություն,
- ձևավորի երաժշտություն լսելու ցանկություն:

9-12 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .


- ստեղծի պայմաններ առարկաների ձայները ուսումնասիրելու համար՝ դրանք սեղմելով թակելով, զցելով և այլն,

- Նպաստավոր պայմանները ստեղծի հարստացնի շրջապատում գտնվող առարկաների հետ գործողություն կատարելու համար, փորձերը:

ՀՈՒՉԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԱՆՁՆԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԿՆԿԱԿՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ



- ա. Սանն արձագանքում է ծանոթ մարդկանց հուզական դրսևորումներին,
- սկսում է շփվել ծանոթ մեծահասակների և հասակակիցների հետ և հաստատել համապատասխան փոխհարաբերություններ
 - ցուցաբերում է անհանգստություն անծանոթ մարդկանց հանդիպելիս կամ ծանոթ մեծահասակից բաժանվելիս,
- բ. արձագանքում է արտաքին աշխարհից եկող ազդակներին հուզականությամբ,
- սկսում է արտահայտել և ճանաչել հիմնական հույզերը
 - արձագանքում է ուրիշի հույզերին,
- գ. արձագանքում է իր անվանը, հետաքրքրություն է ցուցաբերում սեփական մարմնի հանդեպ, ուսումնասիրում է շրջապատող առարկաներն ու խաղալիքները, մարդկանց դեմքերը,
- գլուխը թեքում է իր անվանն ի պատասխան
 - սիրում է ուսումնասիրել սեփական մարմինը, ցույց է տալիս առնվազն 3 մարմնի մաս
 - սիրում է նայել իրեն հայելու մեջ
 - սիրում է ուսումնասիրել այլ մարդկանց դեմքեր
 - Ձեռքից ձեռք փոխանցելով, թափահարելով գործողություններ է կատարում խաղալիքների կամ այլ առարկաների հետ
- դ. Ձգտում է ինքնուրույնության գործողություններում.
- զբաղեցնում է ինքն իրեն
 - փորձում է ինքնուրույն քայլել, ուտել, ինչ-որ բան վերցնել
- ե. զարգանում է լսողական ուշադրությունը,
- Հուզականորեն արձագանքում է երաժշտությանը,
 - ուշադիր լսում և գտնում է ձայնի աղբյուրը, որտեղից հնչում է երաժշտությունը,
 - հետաքրքրություն է ցուցաբերում մեծահասակների երգեցողության և պարային շարժումների նկատմամբ,
 - զգացմունքային արձագանքում է երաժշտությանը,
 - արտահայտում է ուրախություն կամ դժգոհություն ձայնարկությունների միջոցով:



ԻՄԱՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Երեխան շրջապատող իրականությունը ընկալում է զգայական ճանաչողության միջոցով, այսինքն՝ երեխան զգայարանների միջոցով տեսնում, լսում, շոշափում է, զգում հպումը, ցավը, համն ու հոտը:

Զգայական լիարժեք զարգացումը առաջին երեք տարիների հիմնական ձեռքբերումներից է, քանի որ այն համարվում է մտավոր դաստիարակության հիմքը: Վաղ տարիքի երեխայի մտածողությունը կրում է ակնառու- տեսողական և ակնառու-գործական բնույթ, ինչը սերտորեն կապված է խոսքային կարողության ձևավորման հետ: Լսելու և հանձնարարություն հստակ կատարելու կարողությունը կարելի է ձևավորել դաստիարակչական ճիշտ հնարներով՝ հիմնվելով դաստիարակի ուղղորդումների և երեխայի հիշողության զարգացման վրա:

Երեխայի մեջ պատկերացումների ձևավորումը և շրջապատում կողմնորոշումը մտավոր զարգացման հաջորդ փուլն է: Պետք է նշել, որ վաղ տարիքում առավել մեծ նշանակություն ունի ոչ այնքան պատկերացումների (գիտելիքների) շրջանակը, որքան զգայական և մտավոր զարգացման աստիճանը:

Մանկահասակ երեխաների տարրական պատկերացումների ձևավորումը, շրջապատում կողմնորոշվելու կարողությունը ձեռք են բերվում ինքնուրույն գործունեության և խաղ-պարապմունքների ընթացքում:

Այս գործընթացում խիստ կարևորվում է ուշադրության զարգացումը՝ որպես մտածողության զարգացման նախապայման: Ուշադրության կենտրոնացումը կարճատև է. սկսում է զարգանալ սկսած կյանքի առաջին ամսից և արագ կատարելագործվում է:

Կամային ուշադրության զարգացումը կախված է նպաստող պայմաններից և մեծերի կողմից նպատակասլաց ուղղորդումից:

Դեռևս կյանքի առաջին ամիսներից անհրաժեշտ է զարգացնել հիշողությունը: Հիշողության զարգացումը նույնպես տեղի է ունենում գործունեության ընթացքում: Երեխան վաղ է ճանաչում ծնողներին, վերհիշում է ծանոթ առարկաները, նախկինում տեսածը վերարտադրում իր խաղերում:

Առարկաների հետ կատարվող տարբեր գործողություններն օգնում են շրջապատի հետ կայուն կապերի ստեղծմանը և ամրապնդմանը:

Երեխայի հիշողությունը պետք է զարգացնել վարժությունների միջոցով:

Ինչպես երեխայի զգայական ընկալումը, այնպես էլ նրա խոսքի ժամանակին և ճիշտ զարգացումը համարվում են մտավոր դաստիարակության հիմքը:

ԻՄԱՑԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ ԱԾԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Իմացական-ճանաչողական զարգացումը ենթադրում է երեխաների հետաքրքրասիրության և ճանաչողական մոտիվացիայի զարգացում, ճանաչողական գործողությունների ձևավորում, երևակայության և ստեղծագործական գործունեության զարգացում, առաջին տպավորությունները սեփական անձի:

2 ամսականից 1 տարեկան

Դաստիարակը պետք է նպաստի յուրաքանչյուր սանի լիարժեք ֆիզիկական և մտավոր զարգացման ապահովմանը, ստեղծի նպաստավոր պայմաններ՝ տեսողական և լսողական հակազդումների ձևավորման, նպաստի տարածության մեջ ձայների ուղղորդված ճանաչմանը կամ տեղայնացմանը, սովորեցնի ընկալել մեծահասակի՝ տարբեր հնչերանգներով արտաբերած ձայները:

2-3 ամսական սաների հետ տարվող աշխատանքները ներառում են հետևյալը.

- սանի հայացքի նպատակաուղղված կենտրոնացման զարգացում,
- հնարավորության ստեղծում՝ հայացքով հետևելու շարժվող առարկաներին, տարբեր ձևերի, գույների, չափսերի խաղալիքներին,
- պայմանների ստեղծում, որպեսզի սանը խաղալիքը կարողանա տեսնել տարբեր դիրքերից,
- կողմնորոշիչ որոնման հակազդման կարողություն զարգացում և այլն:

3-6 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .

- զարգացնի տեսողության կենտրոնացումը տարբեր դիրքերում՝ մեջքի, փորի, կողքի վրա,
- սանի ուշադրությունը կենտրոնացնի խաղալիքների, մեծահասակների ձայների ու երգեցողության վրա,
- պայմաններ ստեղծի առարկաներով տարբեր գործողություններ անելու համար (թափահարել, թակել),

6-9 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .

- շարունակի զարգացնել տեսողական և լսողական ընկալումը,
- պայմաններ ստեղծել մեծահասակի հետ առարկայական գործունեություն կատարելու համար (նայել, զննել, լսել տարբեր առարկաների և խաղալիքների ձայնը),

- նպաստի մեծահասակների գործողությունների ընդօրինակմանը,
- սովորեցնի նայել հայելու մեջ, տեսնի իր արտացոլանքը, ձեռքն ուղղի դեպի իրեն,
- սովորեցնի երեխային մեծահասակի ձեռքից խաղալիք վերցնել, բռնել և զննել,
- սովորեցնի առարկաները դնել իրենց տեղերում:

9-12 սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է.

- զարգացնի առարկաները հարաբերակցելու կարողությունը, սովորեցնի գտնել դրանց տեղը,
- նպաստի մեծահասակի գործողությունների ընդօրինակմանը,
- զարգացնի հետաքրքրությունն առարկաների հետ գործողություններ կատարելիս,
- բարդացնի խաղալիքներով կատարվող պարզ գործողությունները,
- սաների ծանոթացնի առարկաների հետ կատարվող գործողություններին՝ (թեթև հարվածներ, նետումներ, սեղմումներ)
- սովորեցնի առարկաները դնել տուփի մեջ, հանել և տեղաշարժել, գլորել,
- սովորեցնի գլորել գնդակը, անիվներով խաղալիքները,
- սովորեցնի աշտարակ կառուցել,
- սովորեցնի թաքնված առարկաները գտնել:

ԻՄԱՑԱԿԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ



ա.սանն, ինքնուրույն տեղաշարժվելով տարածության մեջ, ծանոթանում է իրեն շրջապատող առարկայական աշխարհին,

փորձում է ճանաչել շրջապատը զգայարանների միջոցով,

բ. առարկաներով կատարում է հարաբերակցված գործողություններ,

- կատարում է առարկայական գործողություններ,
- դրսևորում է աչք-ձեռք կոորդինացիայի տարրական կարողություններ,

գ. ճանաչում է իրեն ծանոթ դեմքեր, առարկաներ.

- տեսադաշտում հայացքով փնտրում է ծանոթ մարդկանց և առարկաներ,
- հայացքով փնտրում է անհետացած առարկաներ:



ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՈԼՈՐՏ

Ինքնասպասարկման և ինքնատիրապետման հմտությունների ձևավորումը նպաստում է երեխաների սոցիալ-հոգեբանական զարգացմանը: Մանկահասակ երեխայի ինքնուրույնությունը սկսվում է այն պահից, երբ զարգանում են ինքնասպասարկման տարրական հմտությունները: Ընդլայնվում են շրջապատող աշխարհի մասին պատկերացումները: Երեխան սովորում է հասկանալ բանավոր հրահանգները, ընդօրինակել, հետևել գործողությունների հաջորդականությանը:

Այս համատեքստում ուղղակիորեն երեխայի զարգացումը զուգորդվում է ինքնատիրապետման նախնական հմտությունների ձեռքբերմամբ: Ինքնատիրապետումը սահմանվում է որպես երեխայի մարմնի դիրքի կառավարում, որն ի սկզբանե ուղեկցվում է մեծահասակների կողմից, ապա աստիճանաբար «տիրապետվում» է երեխայի կողմից:

Այս առումով նպատակահարմար է ի սկզբանե աջակցել ինքնասպասարկման և ինքնատիրապետման յուրաքանչյուր փորձի դրսևորմանը, որի արդյունքում երեխայի մոտ կձևավորվի «աշխատելու» կարողություն, շրջապատող առարկաների ճանաչում և իմաստի ընկալում:

Ինքնասպասարկումը վաղ տարիքում ներառում է այնպիսի հմտություններ, ինչպիսիք են՝ ուտելը, հանվելը, հագնվելը, լվացվելը: Ինքնասպասարկման հմտությունների զարգացումը կախված է դաստիարակության ազդեցությունից, երեխայի զարգացման հնարավորություններից, խոշոր և մանր մոտորիկայի, մտածողության, ուշադրության, տեսողության և լսողության համարժեք զարգացումից:

Այս ամենի շնորհիվ երեխան հետագայում կկարողանա կատարել ինքնուրույն գործողություններ, ինչպես օրինակ հագուստը հանելը կամ հագնվելը, գդալով ուտելը, բաժակից խմելը և այլն:

Անվտանգությունն ի սկզբանե նույնպես ապահովվում է մեծահասակի կողմից, որը երեխային կարծես «պատրաստի» գործունեության մոդելներ է տրամադրում՝ ներքնայնացնացնելու համար: Մանկահասակ երեխան սկսում է դրանց աստիճանական կիրառումը: Օրինակ՝ վտանգ սպառնացող առարկայի հանդեպ մեծահասակը ձևավորում է զգուշանալու հմտություն, որն աստիճանաբար երեխայի մոտ դառնում է սեփական կարողունակության դրսևորում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՈԼՈՐՏԻ



2-3 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է.

- ✓ կազմակերպի և իրականացնի հիգիենիկ միջոցառումները՝ լոգանք, մերսում,
- ✓ ապահովի հնարավորինս անվտանգ միջավայր
- ✓ նպաստի սանի հանգիստ քնի կազմակերպմանը

3-6 ամսական երեխաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է .

- ✓ ապահովի անվտանգ միջավայր,
- ✓ կարողանա ուղղորդել երեխաներին մեծահասակների զգուշացումներին լսելու,
- ✓ սովորեցնի ինքնասպասարկման պարզագույն հմտություններ,
- ✓ ձևավորի անվտանգության պահելու տարրական հմտություններ:

6-9 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է՝

- ✓ ձևավորի ինքնուրույն ուտելու նախնական հմտություններին,
- ✓ ձևավորի ինքնուրույն խմելու նախնական հմտություններին,

9-12 ամսական սաների հետ աշխատանքում դաստիարակը պետք է՝

- ✓ սովորեցնի սեփական ձեռքով ուտել ոյուրամարս ուտելիք,
- ✓ սովորեցնի հնարավորինս առանց թափելու խմել բաժակով,
- ✓ սովորեցնի հանել հեշտ հանվող հագուստը,
- ✓ սովորեցնի անվտանգ կանգնել ուղիղ դիրքով կամ տեղաշարժվել տարածության մեջ,
- ✓ սովորեցնի շրջանցել վտանգ պարունակող առարկաները (վարդակ, սեղանի սուր ծայր և այլն),
- ✓ սովորեցնի կատարել ուղղորդված նպատակային գործողություններ, օրինակ լսել և կատարել հրահանգը:

**ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՈԼՈՐՏՈՒՄ
ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**



ա. Սանն արձագանքում է հիգիենիկ միջոցառումներին և խնամք ենթադրող իրավիճակներին,

- Դրականորեն է արձագանքում լոգանքին.
- Դրական է արձագանքում մերսմանը.
- Անհանգստություն է ցուցաբերում որևէ անհանգստացնող երևույթների նկատմամբ:

բ. Արձագանքում է մեծահասակների նախազգուշացումներին՝ որոշակի գործողությունների վտանգավորության մասին,

- Ուշադրություն է դրսևորում մեծահասակների կողմից տրված նախազգուշացումներին.
- Ցուցաբերում է տագնապայնություն իրեն անձանոթ երևույթների նկատմամբ:

գ. Դրսևորում է ինքնասպասարկման պարզագույն կարողություններ՝ փորձում է ինքնուրույն խմել բաժակից, ձգելով քաշում և հանում է հագուստը.

- փորձում է ինքնուրույն ուտել,
- փորձում է ինքնուրույն խմել բաժակից,
- ձգվում է դեպի գդալը և փորձում է այն նպատակային կիրառել,
- ազատվում է հեշտ հանվող հագուստից:

ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ԱՌԱՋԻՆ ԽՄԲՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԽԱՂ-ՊԱՐԱՊՄՈՒՆԵՆԵՐԸ



Խաղը համարվում է շրջապատող աշխարհի ճանաչման և սոցիալականացման կարևոր միջոցներից մեկը:

Ընդունված է համարել, որ խաղի միջոցով երեխաները ծանոթանում են մեծահասակների գործունեության տարբեր ձևերին, սովորում են ըմբռնել մարդկային

զգացմունքներն ու հույզերը, ձեռք բերել հաղորդակցման հմտություններ՝ պարզ դերային փոխհարաբերությունների մեջ մտնելով:

Խաղը նպաստում է երեխայի զգայական փորձի հարստացմանը, ակնառու-պատկերավոր մտածողության, ստեղծագործական երևակայության և խոսքի զարգացմանը [20, էջ 212]:

Այն փոքրիկի համար հասանելի և ուրախ գործունեություն է, որը նրան հաճույք և լավ տրամադրություն է պարգևում:

Վաղ տարիքի երեխաների մտավոր զարգացման համար մեծ նշանակություն ունեն խաղեր-պարապմունքները և գործունեության այն տեսակները (խոսքային, գործնական, կառուցողական), որոնք համարվում են աշխարհաճանաչման և վերափոխման հնարավոր ուղիներ:

Առարկաների հետ կատարվող առաջին գործողությունները երեխաների մոտ սկսվում են արդեն 6-7 ամսականում: Դրանց յուրահատկությունը կայանում է նրանում, որ երեխան այդ գործողությունները կատարում է անկախ այս կամ այն առարկայի հատկություններից ու նպատակից, օրինակ՝ սեղանին գդալ է թակում, կրծում, զցում հատակին:

Տարիքային զարգացմանը զուգընթաց՝ կատարվող գործողություններն ավելի են բարդանում (օրինակ, փոքր արկղը դնում է մեծի մեջ, խաղալիքը «տեղավորում է» օրորոցում և այլն):

9-10 ամսական երեխան ընդօրինակում է մեծերին, ընդօրինակում նրանց ցուցադրած գործողությունները: Օրինակ՝ նա օղակը հագցնում աշտարակի վրա, տուփը դնում տուփի մեջ և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաղի զարգացմանը նպաստում են մեծահասակների անմիջական ազդեցությունը, ուսուցումը և դաստիարակությունը, շրջապատից ստացած տպավորությունները ինչպես նաև մեծերի կողմից առարկաների և խաղալիքների նպատակաուղղված կիրառումը:

Ծրագրով առաջադրված խնդիրների շրջանակում դաստիարակը կազմակերպում է պարապմունքներ և խաղեր, որոնց միջոցով կայունանում է երեխաների ուշադրությունը, զարգանում են հիշողությունը և մտածողությունը:

Պարապմունքի էական նշանակությունն այն է, որ այդ ուղով զարգանում են սանի՝ պարապելու, առաջադրանքը հասկանալու, հիշելու և դաստիարակի ցուցումով գործելու կարողությունները: Պարապմունքների ժամանակ համատեղ գործունեությունը սանի մեջ ձևավորում է դրական փոխհարաբերություններ:

Դաստիարակի կողմից հատուկ նպատակով կազմակերպված խաղերը և պարապմունքները համարվում են ինքնուրույն խաղի զարգացման և կիրառման արդյունավետ միջոցներ: Այստեղ նշենք, որ պարապմունքների անցկացումը պարտադիր է. անցկացվում է ամեն օր՝ արթնության հարմար ժամանակահատվածում:

Խաղ-պարապմունքների անցկացման բնույթը

Անհատական խաղ-պարապմունքները 2-9 ամսական սաների հետ դաստիարակը պետք է անցկացնի մանեժում կամ հատակի վրա, որտեղ կա զորգ կամ հատուկ հարմարեցված ծակույթ: Խաղ-պարապմունքները կարելի է անցկացնել նաև սեղանի շուրջ, որը էլ անելի կնպաստի երեխայի ճանաչողական գուծընթացների, մասնավորապես կամային ուշադրության ձևավորմանը:

Անհատական խաղ-պարապմունքների տևողությունը պետք է սահմանել 2-3 րոպե, իսկ ենթախմբով անցկացվող խաղ-պարապմունքները՝ 5-7 րոպե, որտեղ կարելի է ընդգրկել 5-7 երեխա:

Խմբի ձևավորումը պետք է ընդգրկի համապատասխան տարիքային շեմի և զարգացման մակարդակի երեխաների, որը ճիշտ կձևավորի նրանց առաջնային կողմնորոշման նախնական կարողությունը:

Այսպիսով, 2,5-3 ամսական սանի հետ դանդաղ շարժվող խաղալիքի հետ կատարվող գործողությունները պետք է հերթազայվեն 10-15 օր, որի ընթացքում դաստիարակը սովորեցնում է նրան դիտել զրուցող մեծահասակի շարժումները և կողմնորոշվել ուղղությունը: Այս տարիքում դաստիարակը կարծես հիմք է դնում «աշխուժացման բարդույթի» առաջացման համար, քանի որ ժպիտով, բարեհաբույր ձայնով և ուղղորդված գործողություններով երեխայի մոտ ձևավորում է նպատակաուղղված հակազդում կատարելու կարողություն:

3-6 ամսական սանի հետ աշխատանքում դաստիարակը զարգացնում է տեսողական և լսողական ընկալման կարողությունը, օգնում է ձայնի աղբյուրը գտնելուն, այլ:

Դաստիարակը սովորեցնում է հուզականորեն արձագանքել ծանոթ ձայներ լսելիս, որն ավելի է արապնդվում հատկապես 4 ամսականում: Այս ժամանակահատվածում է զարգանում նաև աչքերի և ձեռքերի համահունչ գործողություններ կատարելու կարողությունը, երբ սանը նպատակաուղղված կենտրոնացնում է հայացքը և փորձում բռնել առարկան:

6-10 ամսականում սանը դաստիարակի ուղղորդմամբ արդեն կարողանում է հայացքը կենտրոնացնել տարբեր ձև ունեցող առարկաների վրա (կլոր, ուղղանկյուն), փորձում է տարբերել նյութերի որակական առանձնահատկությունները (փափուկ, առածգական և այլն):

9-12 ամսական սանի հետ աշխատանքում դաստիարակը խաղ-պարապմունքների միջոցով զարգացնում է լսելու և կատարելու կարողությունը, երբ արդեն երեխան կարողանում է լսել սիրալիր մեծահասակի ձայնը և «կատարել» հնչեցված հրահանգը: Այս փուլում շատ լավ կարող են կազմակերպվել «Թաքցնել և փնտրել», «Որտե՞ղ է թմբուկը», «Որտե՞ղ է ժամացույցը», «Հրաշալի պայուսակ» և այլ խաղեր:

Խաղ-պարապմունքները նպատակաուղղված են խրախուսելու այնպիսի կարողությունների ձևավորմանը, որոնք կարող են ծագել երեխայի մեջ նրա ինքնուրույն խաղերի ընթացքում, օրինակ՝ խոսքը հասկանալը, հնչյուններն ընդօրինակելը, ինչպես նաև ձևավորվում են շրջապատող առարկաներին և երևույթներին ցույց տալու և անվանելու նպատակաուղղված շարժումները, որոնք արտահայտվում են «ծափիկ-ծափիկ», «տուր ձեռքդ», «ինչ մեծ է» և այլ գործողությունների համատեքստով: Շարժումների զարգացմանն ուղղված պարապմունքները կարելի է կազմակերպել նաև երաժշտության համակցմամբ, որի ժամանակ երեխաները լսում են պարային, հանգիստ բնույթի մեղեդիներ՝ մեծերի կատարմամբ, ինչն էլ իր հերթին ուղեկցվում է համապատասխան շարժումներով և խաղալիքների ցուցադրմամբ՝ դափեր, զանգակներ, մարականներ, տիկնիկներ և այլն («Տիկնիկը քնած է», «Տիկնիկը պարում է»):

9-10 ամսականից մինչև 1 տարեկան սաների հետ կազմակերպվող խաղ-պարապմունքների ժամանակ դաստիարակը զարգացնում է մեծերի խոսքը հասկանալու

կարողությունը, ընդլայնում շրջապատում կողմնորոշվելու ունակությունը, ցույց տալու և նոր առարկաներն անվանելու կարողությունը:

Այսպիսով անհատական և խմբային խաղ-պարապմունքներ անցկացվում են երեխայի արթնության ժամանակ, երբ հաշվի են առնվում սաների ներգրավվածության սկզբունքը:



ՉԱՐԳԱՑՆՈՂ-ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՅԱՆՁՆԵՐԸ

Չարգացնող միջավայրի անհրաժեշտությունը կարևորվել է դեռևս Ժ.Ժ Ռուսոյի մանկավարժական հայացքներում: Դաստիարակության համակարգն, ըստ նրա, կլինի արդյունավետ, եթե ստեղծվի որոշակի հավասարակշռվածություն երեխայի բնական պահանջմունքների և իրական հնարավորությունների միջև, որը կարող է իրականանալ հատուկ զարգացնող միջավայրի պայմաններում, քանի որ անձը միշտ չէ, որ ստանում է պատրաստի գիտելիքներ, այլ սովորում է և ձեռք է բերում ինքնուրույն՝ բնության ուսումնասիրման և սեփական փորձի ձեռքբերման գործընթացներում:

Չարգացնող միջավայրը ներառում է ոչ միայն առարկայական միջոցներ, այլև սոցիալական բաղադրիչներ, քանի որ այդ երկուսի առկայության պայմաններում կապահովվի երեխայի արդյունավետ գործունեությունը: Բացի դրանից զարգացնող միջավայրը հնարավորություն է տալիս մշտապես փոխել երեխայի գործունեության բովանդակությունը հենց իր փորձի հարստացման միջոցով:

Առարկայական աշխարհն անսպառ է և տեղեկատվական, և սոցիալական առումներով, քանի որ բացահայտում է նաև երեխա-մեծահասակ շփման հնարավորությունները՝ նկատի ունենով, որ երեխան և մեծահասակը գործում են միևնույն հարմարավետ առարկայական միջավայրում:

Վաղ մանկական հասակում առանձնացվում են զարգացնող-առարկայական միջավայրի մի քանի հիմնական բաղադրիչներ.

✚ սոցիալական բաղադրիչ, որի հիմնական բնութագրիչներն են փոխհարաբերությունների ընթացքում փոխըմբռնումը, դրական տրամադրության գերակշռումը և այլն,

✚ հոգեբանական բաղադրիչ, ըստ որի՝ զարգացնող միջավայրի համար կարևոր են հարմարավետությունն ու անվտանգությունը, սանիտարահիգիենիկ չափանիշները, զարգացնող-առարկայական միջավայրի և կրթական ծրագրի համապատասխանությունը, միջավայրի բազմազանությունը, առարկաների կարգավորված դասավորվածությունը, զգայական տպավորությունների ապահովումը՝ շրջապատող միջավայրի փոփոխման պայմաններում:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում մինչև 1 տարեկան երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներն են՝

✚ միջավայրը պետք է լինի տարատեսակ տարրերից բաղկացած, որոնք անհրաժեշտ են երեխայի բոլոր գործողությունները բարելավելու համար,

✚ պետք է թույլ տա երեխային հստակ տեղափոխվել գործունեության մի ձևից մյուսին,

✚ պետք է բավականաչափ ճկուն և կառավարելի լինի երեխայի և մեծահասակների կողմից,

✚ խմբասենյակի տարածքում պետք է լինեն մանեժներ կամ այլ սարքավորումներ, որոնք ապահովում են երեխաների անվտանգությունը.ինչպես նաև փափուկ հատակ՝ չորեքթաթ շարժվող երեխաների համար.

✚ տարածքը պետք է համալրել երեխաների նստակյաց խաղերի, ինչպես նաև երեխաների հենաշարժողական ակտիվության համար անհրաժեշտ սարքավորումներով և միջոցներով,

✚ տարածքում պետք է լինեն ինքնուրույն և մեծերի հետ գործունեության ընթացքում կիրառելու համար նախատեսված գունեղ նկարներ, խաղալիքներ, ինչպես նաև ձեռքի շարժումներն ու գործողությունները խթանող խաղալիքներ և պարագաներ, սյուժետային խաղալիքներ (մանկական կահույք, սպասք, տիկնիկներ, մեքենաներ, կենդանիներ և այլն). մանկական երաժշտական գործիքներ, ձայնային հնչեղությամբ խաղալիքներ, նվագարկիչ, ձայնարկիչ, այլ տեխնիկական միջոցներ[3]:

Չարգացնող-առարկայական միջավայրն իր բովանդակությամբ կառուցվում է առարկաների հետ փոխազդեցության ժամանակ հեռավորության, դիրքի պահպանման, ակտիվության, ինքնուրույնության, ստեղծագործական մոտեցման, կայունության, շարժունության, երեխայի և մեծահասակի անհատական հարմարավետության և հուզական բարօրության հաշվառման, երեխաների սեռատարիքային տարբերությունների հաշվառման սկզբունքների հիման վրա:

Չարգացնող-առարկայական միջավայրը վաղ տարիքի երեխայի զարգացման վրա անդրադառնում է հետևյալ կերպ. ի սկզբանե առարկայական միջավայրը նրա համար

սահմանափակ է, այնուհետև ընդլայնվում է՝ ներառելով բակը, փողոցը, նախադպրոցական ուսումնական հաստատությունը, խմբասենյակը և այլն:

Առարկայական միջավայրի խնդրահարույց լինելը երեխաների մեջ առաջացնում է հարցեր, խթանում երևակայությունը, դրդում է ստեղծագործելուն: Մանկության առարկայական աշխարհը ոչ միայն խաղային միջավայր է, այլ նաև գործունեության ձևերի զարգացման միջավայր[57]:

Չարգացնող միջավայրը երեխայի անհատականության և համակողմանի զարգացման արդյունավետ միջոց է, որը կոնկրետանում է ըստ շարժողական, իմացական-խոսքային, սոցիալ-անձնային, հուզական զարգացման ոլորտների:

Ստորև աղյուսակի տեսքով առանձնացված են վաղ մանկության տարիքի երեխաների զարգացնող-առարկայական միջավայրի առանձնահատկություններն՝ ըստ վերոնշյալ ոլորտների.

Աղյուսակ 4. Վաղ մանկության տարիքի երեխաների՝ զարգացնող-առարկայական միջավայրի առանձնահատկությունները

Սոցիալ-անձնային զարգացում	
Պատկերային խաղալիքներ	Կենդանիների պատկերներով մինչև 35–40 սմ չափս ունեցող տիկնիկներ՝ (շուն, կատու, նապաստակ, աքաղաղ, արջ և այլն), պարզ տիկնիկներ (չափսը՝ 10–20 սմ)
Կենցաղային իրեր	Տիկնիկների համար նախատեսված կահույք, սպասքի հավաքածու (հեշտ բացվող և փակվող փականներով ամաններ, 8-13 սմ տրամագծով բազմագույն բաժակներ և ափսեներ՝ մինչև 4-5 սմ չափսի տարբեր մանր իրեր դնելու համար), անկողնային պարագաներ
Իմացական զարգացում	
Դիդակտիկ խաղալիքներ	Չիչկաններ (տարբեր գույներ, ձևեր, չափեր); զգայական զարգացման համար նախատեսված խաղալիքներ (տարբեր գույնի, ձևի և այլն), ազգային խաղալիքներ,

	տիկնիկներ և այլն:
Կառուցողական նյութեր	Առարկաների նկարներով փայտե խորանարդներ (պլաստմասե, փափուկ), շինարարական նյութեր՝ խորանարդներ, պրիզմաներ, ուղղանկյուն և այլն:
Խոսքի զարգացում	
Թատերական գործունեության համար նախատեսված խաղալիքներ և նյութեր	Բիբաբո թատրոնի տիկնիկներ-հերոսներ (կատու, շուն, նապաստակ, արջ); տարբեր նյութերից պատրաստված մատների տիկնիկներ, շարժական խաղալիքներ (նապաստակ, արջ, հավ):
Հուզական զարգացում	
Երաժշտական սարքավորումներ և ձայնային խաղալիքներ	Դաշնամուր (երաժշտական դահլիճում), չխկչխկաններ, զանգակեր, եռանկյուններ, օրորոցային երգերի աուդիո ձայնագրություններ
Շարժողական զարգացում	
Սպորտային պարագաներ և սարքավորումներ	Սողալու համար նախատեսված գորգեր, բազմազան գնդակներ (նետելու, գլորելու, մերսման համար նախատեսված և այլն).

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք , 2020

2. ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագիր՝ հաստատված՝ ըստ ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N16-Ա որոշման, 2021
3. ՀՀ ԿԳՆ Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներ, Երևան, 2021թ.:
4. Առաքելյան Ռ. «Շարժախաղեր» Ե.: -2009
5. Չայֆեր Ս, Բաուման Մ., Այսենբերգ Ջ.Փ., «Անհատականացված ուսուցումը վաղ մանկական տարիքի կրթական համակարգում»: Դասընթաց բուհերի վաղ մանկական տարիքի երեխաների կրթության մասնագետների համար Վաշինգտոն, 1997թ
6. Ինքնուրույն ընթերցանության ձեռնարկ «Մանուկների աշխարհը», Երևան, 2013
7. Լուսինյան, Ա. Ղազարյան, Կ. Երաժշտությունը Նախադպրոցական ուսումնական հաստատությանում, «Չանգակ 97», Երևան 2009թ.:
8. Խուղոյան Ս.Երևան, 2004 Անձի զարգացման ճգնաժամային տարիքները
9. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ ԿԳՆ, ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ), Երևան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ: Փրինթինֆո, 2011թ.:
10. Մինչև մեկ տարեկան երեխայի խնամքը-Երևան, Առերեսում>>-Անի հրատ. համալիր, 2008թ., 108 էջ
11. Հարությունյան Թ. Այդ զարմանահրաշ հեքիաթների աշխարհում Երևան, հեղինակային հրատարակություն, 2012
12. Հովեյան Ս., «Հայկական ազգային շարժախաղերը Նախադպրոցական կրթական համակարգում», Երևան, «ՎՄՊրինտ», 2010թ.:
13. Հովհաննիսյան Ա և ուրիշներ, «Նախադպրոցական ուսումնական հաստատությանի վաղ հասակի առաջին և երկրորդ խմբերի կրթական համալիր ծրագիր (կյանքի առաջին և երկրորդ տարի) կրթական համալիր ծրագիր»ՀՀ ԿԳՆ, ԿԱԻ, Երևան, ԿԱԻ, 2012թ.
14. Ղազարյան, Կ.Երաժշտադիդակտիկ խաղեր, Երևան 2007թ.
15. Նախադպրոցական ուսումնական հաստատությանի դաստիարակության ծրագիր, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1973թ.
16. Նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների դաստիարակության և ուսուցման տիպային ծրագիր, Երևան 1986թ.:
17. Մանուկյան Լ. և ուրիշներ, Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր, «Չանգակ 97», 1999թ.:

18. Մանուկյան Լ.Լ., Մտուր նախադպրոցական ուսումնական հաստատությանում վաղ տարիքի երեխաների դաստիարակության մի քանի հարցերի մասին, Հանրապետական նախադպրոցական գիտամեթոդ կաբինետ, 1972թ:
19. Մանուչարյան Ս. Ռ., Նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակությանն ուղղված աշխատանքների առանձնահատկությունները Ե.: -2003
20. Մարության Ս., Դավաթյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, «Չանգակ 97», Երևան, 2008թ.
21. Միտոյան Հ., Սմբատյան Լ. «Ուսումնական ձեռնարկ նախադպրոցական ուսումնական հաստատությանի համար», Էդիթ պրինտ հրատարակչություն, 2010թ.
22. Պողոսյան Լ., Եկեք երգենք ու խաղանք, «Արևիկ», Երևան, 1997թ:
23. Ջոնս, Ժ. Իգնելզի Ս., «Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը»:Դասընթաց բուհերի վաղ մանկական տարիքի երեխաների կրթության մասնագետների համար, Վաշինգտոն, 1997թ
24. Սմբատյան Լ.«Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը նախադպրոցական ուսումնական հաստատությանում»,Երևան, հեղինակային հրատարակություն 2014 թ.:
25. Аксарина Н.М. Воспитание детей раннего возраста: учебник для отделений мед. сестер дет. учреждений мед. училищ. — 3-е изд., испр.и доп. — М.: Медицина, 1977.
26. Аксарина Н.М., Кистьяковская М.Ю., Ладыгина Н.Ф., Эйгес Н.Р. Развитие и воспитание ребенка от рождения до трех лет. / Под ред. проф. Н.М. Щелованова. Изд. 2-е. — М.: Просвещение, 1969.
27. Амонашвили Ш. А. Основы гуманной педагогики. В 20 кн. Кн. 6. Педагогическая симфония. Ч. 1. Здравствуйте, Дети! — М.: Амрита, 2013.
28. Антология дошкольного образования: Навигатор образовательных программ дошкольного образования: сборник. — М.: Издательство «Национальное образование», 2015.
29. Асмолов А. Г. Психология личности. Культурно-историческое понимание развития человека. — М.: Академия, 2011.
30. Безруких М.М., Фарбер Д.А. Психофизиология. Словарь / Психологический лексикон. Энциклопедический словарь в шести томах / Ред.-сост. Л.А. Карпенко. Под общ. ред. А.В. Петровского. И.: ПРЕ СЭ, 2016.
31. Бернштейн Н.А. Физиология движений и активность / Под ред. академика О.Г. Газенко. — М.: Наука, 1990.

32. Бехтерев В.М. Проблемы развития и воспитания человека: избр. психол. тр. / под ред. А.В. Брушлинского, В.А. Кольцовой. — М.: МПСИ; Воронеж: МОДЭК, 2010.
33. Божович Л. И. “Личность и ее формирование в детском возрасте” –Санкт-Петербург : Питер, 2009. – 400 с
34. Боулби Дж. Создание и разрушение эмоциональных связей. — М.: Академический проект, 2004. 21. Воспитание детей раннего возраста. Под ред. Г.М. Ляминой. Издание 2-е. — М.: Просвещение, 1976.
35. Венгер Л. А. Восприятие и обучение. — М., 1969.
36. Венгер Л.А., Пилюгина Э.Г., Венгер Н.Б. Воспитание сенсорной культуры ребенка от рождения до 6 лет. — М.: Просвещение, 1988.
37. Веракса Н. Е. и др. Познавательное развитие. — М.: Мозаика-Синтез, 2014.
38. Винникот Д.В. Ребенок, семья и внешний мир. Пер. с англ. — М.: Институт общегуманитарных исследований, 2015.
39. Выготский Л. С. Мышление и речь // Собр. соч.: в 6 т. — Т. 2. — М.: Педагогика, 1982
40. Выготский Л.С. Педагогическая психология / Под ред. В.В. Давыдова. — М.: Педагогика–Пресс, 1996.
41. Выготский Л.С. Психология развития ребенка. — М.: Смысл, Эксмо, 2004.
42. Галигузова Л.Н., Мещерякова С.Ю. Педагогика детей раннего возраста: учебное пособие. — М.: ВЛАДОС, 2007.
43. Галигузова Л.Н., Смирнова Е.О. Ступени общения: от года до шести. — М.: Интор, 1996.
44. Дьюи Дж. От ребенка — к миру, от мира — к ребенку: сб. статей/Сост. и вступ. ст. Г.Б. Корнетова. — М.: Карапуз-дидактика, 2009.
45. Зворыгина Е.В. Первые сюжетные игры малышей. — М.: Просвещение, 1988.
46. Инклюзивная практика в дошкольном образовании: метод. пособие для педагогов дошкол. учреждений / под ред. Т. В. Волосовец, Е. Н. Кутеповой. — М.: Мозаика-Синтез, 2011.
47. Каптерев П.Ф. Задачи и основы семейного воспитания. —СПб. Тип. Е. Евдокимова, 1898. Кожевникова В.В. Моделирование образовательной среды для детей раннего возраста на основе амплификации развития. Дис. ... канд. пед. наук. — М.: ИИДСВ РАО, 2018.
48. Концепция разностороннего развития детей младенческого и раннего возраста в системе дошкольного образования /М.Е. Богоявленская, Е.Е. Кравцова, И.А. Лыкова, С.Н. Николаева, О.С. Ушакова и др.—М.: ИИДСВ РАО, 2018.

49. Короткова Н. А., Нежнов П. Г. Наблюдение за развитием детей в дошкольных группах. — 3-е изд., дораб. — М.: Линка-Пресс, 2014.
50. Корчак Я. Уважение к ребенку. — СПб. Питер, 2015.
51. Кравцов Г. Г., Кравцова Е. Е. Психология и педагогика обучения дошкольников: учеб. пособие. — М. Мозаика-Синтез, 2013.
52. Кривцова С. В., Патяева Е. Ю. Семья. Искусство общения с ребенком / под ред. А. Г. Асмолова. — М.: Учебная книга БИС, 2008.
53. Крылова Н.Б. Развитие культурологического подхода в современной педагогике // Личность в социокультурном измерении: история и современность: Сб. статей. — М.: Индрик, 2007.
54. Кудрявцев В. Воображение, творчество и личностный рост ребенка. — М.: Чистые пруды, 2010. (Библиотечка «Первого сентября», серия «Воспитание. Образование. Педагогика»; вып. 25.).
55. Лисина М.И. Возрастные и индивидуальные особенности общения со взрослыми у детей от рождения до 7 лет. Автореферат дис. д-ра пед. наук. — Москва, 1974.
56. Лисина М.И. Формирование личности ребенка в общении. -СПб.: Питер, 2009.
57. Новоселова С.Л. Развивающая предметная среда. Методические рекомендации. - М.: Центр «Дошкольное детство» им. А.В. Запорожца, 2001.
58. Обухова, Л. Ф. Возрастная психология: учебник для бакалавров / Л. Ф. Обухова. — Москва, 1999. — 442 с.
59. От рождения до школы. Инновационная программа дошкольного образования. /Под ред. Н.Е. Вераксы, Т.С. Комаровой, Э. М. Дорофеевой. — Издание пятое (инновационное), испр. и доп.—М.: Мозаика-Синтез, 2019. — с.336
60. Примерная общеобразовательная программа воспитания, обучения и развития детей раннего и дошкольного возраста /Под ред. Л.А. Парамоновой. — М.: Новый учебник, 2003.
61. Смирнова Е.О. Развитие воли и произвольности в раннем и дошкольном возрастах. — М.: Ин-т практ. психологии; Воронеж: НПО «МОДЭК», 1998.
62. Сохин Ф.А. Психолого-педагогические основы развития речи дошкольников. — М.: Просвещение, 2002.
63. Эльконин Д. Б. Избранные психологические труды. — М., 1989. Эльконин Д. Б. Психология игры. — М.: Владос, 1999.
64. Эриксон Э. Детство и общество / пер. с англ. — 2-е изд., перераб. и доп. —СПб. Фонд «Университетская книга», 1996. Хетти Дж. Видимое обучение /пер. с англ. — М.: Издательство «Национальное образование», 2017.

65. Boehm B. A Spiral Model of Software Development and Enhancement / B. Boehm. // ACM SIGSOFT Software Engineering Notes. ACM. № 11(4). 1986. P.14–24.
66. Dewey J. Froebel's Educational Principles. Chapter 5 in The School and Society. Chicago: University of Chicago, 1915. p. 111–127.
67. Lobok A. My educational odyssey to dialogic agency-based probabilistic pedagogy Journal of Russian and East European Psychology, 50 (6), pp. 5–8, DOI: // 10.2753/RPO1061-0405500601
68. Neale, D. Pino-Pasternak, D. A Review of Reminiscing in Early Childhood Settings and Links to Sustained Shared Thinking (2017) Educational Psychology Review September 2017, Volume 29, Issue 3, pp 641–66529.
69. Papousek H. Individual variability in learned responses in human infants. In: R. J. Robinson (ed.). Brain and Early Behaviour. L., 1969.
70. Rantavuori J., Engeström Y., Lippone L. Learning actions, objects and types of interaction: a methodological analysis of expansive learning among pre-service teachers Frontline Learning Research, Vol: 4, Issue: 3, Page: 1–27. White E.J., Peter M., Redder B. (2015) Infant and teacher dialogue in education and care:
71. White E.J., Peter M., Redder B. Infant and teacher dialogue in education and care: A pedagogical imperative // Early Childhood Research Quarterly 30 (2015), pp 160–173.
72. <https://ikp-rao.ru/txt/1559907384274.pdf>»: